Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-99

34 ՐԴ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒՔԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Բառոյագիտութիւն, Քաղաք. Կրթութիւն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Գիտական Ուսումներ, Մայրենի լեզու

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Տարեկան Ընթացք

Գ. ՊՐԱԿ

☞ ԳԻՐՔ ԱՇԱԿԵՐՏԻՆ

اشبو مكتب جديد نام اثر معارف نظارت جليله‌سنك فى ٢٠ تموز سنه ٣١٦ تاريخلى و ١٨٧ نومرولى رخصتنامه‌سيله وسمپاط داوديان معرفتيله ترتيب وطبع اولنمشدر

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՊՐԹԱՏ ԴԱՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԲԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Պապը - Ալի Ճաստէսի, Թիւ 38

1901

491.99-8
Դ-23

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Գ. ԴԱՒԹԵԱՆ
AGENCE DAVI

8203

29 MAR 2013

1005-10

491.99-8
Ղ-23

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՊԷՏՔԸ

Ա. ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Ընկերական կեանքին պէտքը. — *Մարդիկ առանց իրարու չեն կրնար ապրիլ։*

Լսա՞ծ էք արդեօք Ռոպէնսոնի պատմութիւնը։ Ռոպէնսոն նաւի մը մէջ ճամբորդութիւն կ՚ընէր, երբ նաւը ընկղմեցաւ և ալիքները զինքը նետեցին անմարդաբնակ կղզի մը։ Զորս կողմը անտառներ, կենդանիներ, դաշտեր ու ձորեր, բայց Ռոպէնսոն միայնակ՝ կը նեղուէր, կը չարչարուէր որ մարդ չիգտնուիր իր քովը։ Օր մը ծովին ալիքները ուրիշ մէկը նետեցին կղզիին ափը, խափշիկ մըն էր ան՝ Ուրբաթ անունով։ Ռոպէնսոն չէր հասկնար խափշիկին լեզուն, ան ալ իրենը չէր հասկնար, բայց ինչ հոգ, Ռոպէնսոն այնքան ուրախ էր ընկեր մը ունենալուն համար որ պաշտպանեց խափշիկը, սիրեց զանի, ան ալ զինքը սիրեց, բարեկամ եղան։

Մեզմէ ոչ մէկը կրնայ առանձին ապրիլ։ Թո՛ղ մարդ մը չատ փառաւոր տուն՝ պարտէզ ունենայ, թո՛ղ լաւ հագուստ՝ լաւ ուտելիք ունենայ, ինչ օգուտ երբ միայնակ է. սիրտը կը նեղուի, պիտի չկրնայ համբերել, ընկեր պիտի փնտռէ։ Ասել է թէ մարդ ընկերական կեանքի պէտք ունի, մարդ պէտք է ուրիշ մարդերու հետ ապրի, աշխատի անոնց համար, ինչպէս անոնք ալ կ՚աշխատին իրեն համար։ Ուրեմն պէտք է իրարու հետ ընկերաբար ապրինք, իրարու բարեկամ ըլլանք, իրար

սիրենք, մենք առանց իրարու չենք կրնար ապրիլ։

1. Առած. Մարդ պէտք է բոլոր արտովը սիրէ ուրիշ մարդիկը՝ իր ընկերները։

2. Առած. Եթէ բան մը առնես, պէտք է փոխարէնը տաս. — Եթէ ընկերական կեանքին օգուտ մը խաղես, պէտք է փոխադարձաբար օգտակար ըլլաս ընկերական կեանքին։

---

2. ԽՕՍԱՑՈՒԹԻՒՆ. — **Պարտականութիւն դէպ ի մարդիկ.** Բոլոր մարդիկ մէկտեղ կը կազմեն շատ մեծ ընտանիք մը։ Ենթադրենք որ ընտանիքի մը մէջ վէճեր կան և շատերը իրար չեն սիրեր։ Երբ առունին մէկը հիւանդանայ, բոլոր վէճերը կը դադրին և ամէն մարդ կուգայ հիւանդին քով և անոր խնամքը կը տանի։

Անգամ մը երկու դրացի աղջիկ իրարու հետ կռիւ ըրին, մէկը միւսին յաղթեց և անոր քաղաքներն առաւ, յաղթողներուն կ'ըսէին Գերմանացի, յաղթուողներուն՝ Ֆրանսացի։ Ֆրանսացի գիւղացի մը դաշտին մէջէն անցած առեն, տեսաւ որ ճամբուն քովը Գերմանացի զինուոր մը ինկած է և «Աստուծոյ սիրուն՝ ինծի քիչ մը ջուր . . .» կը պոռայ։ Գիւղացին անմիջապէս թշնամի զինուորին քովը վազեց։ Զինուորը կարծեց թէ եկաւ զինքը սպաննելու, բայց ո՞րչափ զարմացաւ երբ տեսաւ որ գիւղացին իրեն խմելու ջուր բերաւ, իր վէրքը լուայ, թաշկինակովը կապեց, յետոյ թեւը մանելով իր ընկերներուն քովը տարաւ։

3. Առած. Ես մարդ եմ. ո՛չ մեկ մարդ ինծի համար օտարական է։

---

3. ԽՕՍԱՑՈՒԹԻՒՆ. — **Եղբայրական զգացում.** — Առաւօտ մը Թունուզի ծովեզերքէն յուսահատ աղաղակներ լսուեցան։ Տեսնուեցաւ որ մարդ մը ծովուն մէջ լոզանք ըրած ժամանակ, ալիքները զայն աւեր կը տանէին։

Ծովը սաստիկ յուզուած էր և մեծ ալիքներ կային, խեղճ մարդը ալիքներուն վրայ կը բարձրանար ու անոնց ներքեւը կ'իջնէր, մինչ կը հաւարձակէր զանի ազատելու համար ծովը նետուիլ։ Այդ մարդը օտարական էր, որ օր մ'առաջ եկած էր Թունուզ. մարդ չէր ճանչնար զինքը։ Ծովեզերքը քաջ երիտասարդ մը կար, երկաթուղիի պաշտօնեայ, որ ըսաւ. «Ո՛վ կ'ըլլայ թող ըլլայ, հերիք է որ մարդ է, պէտք է ազատել» ու նետուեցաւ ծովուն մէջ՝ խեղդուողը ազատելու համար։

4. Առած. Պարկեշտ մարդը ինչ բարիք որ ձեռքեն գայ կ'ընէ։

5. Առած. Տուէք ամէն մարդու, ինչ որ պարտաւոր էք տալու։

---

4. ԽՕՍԱՑՈՒԹԻՒՆ. — **Ցարաբերութիւններու մէջ ազնիւ ըլլալու է.** — Դուք ունիք ընկերներ, բարեկամներ, որոնց հետ խօսակցելով ու խաղալով ուրախ կ'ըլլաք։ Միշտ աշխատեցէք անոնց հետ անուշութեամբ վարուիլ, զուարթ ու ազնիւ ըլլալ։ Զգոյշ եղէք որ բնաւ դէշ չխօսիք անոնց վրայ, բնաւ չծաղրէք զանոնք, ու երբ անոնք ներկայ չեն, դէշ խօսքեր չխօսիք անոնց վրայով։

Ամէն մարդ իր աղէկ ու դէշ կողմերն ունի։ Ան որ միշտ ուրիշները կը ծաղրէ, շատ անգամ ինքը ամէնէն աւելի ծիծաղելի կողմեր ունի։ Ես պզտիկ աղայ մը կը ճանչնայի որ սովորութիւն ըրած էր իր ընկերներէն ամէն մէկուն անուն մը դնել ու զանոնք ծաղրել։ Մէկուն կ'ըսէր թէ դուն՝ խոժոռ ես, ուրիշի մը՝ բարկացոտ ես, երրորդի մը՝ ստահօս ես, չորրորդի մը՝ տգեղ դէմք ունիս, վերջապէս ամէնուն ալ մէկ մէկ բան կը կոչէր։

Այնքան զէշցած էր այս պզտիկ աղին բնաւորութիւնը, որ նոյն իսկ իր ուսուցիչը կը ծաղրէր, շատ

անդամ ընկերներուն առջև անոր խօսելու և շարժելու ձևերը ընելով, կապիկի մը պէս։

Այս տղին հայրն ու մայրը խրատեցին զինքը, ընկերները յանդիմանեցին, բայց մտիկ չըրաւ։ Քիչ քիչ ամէն մարդ իրմէ պաղեցաւ, ընկերները ա՛լ չխօսեցան անոր հետ, մէկ հոգի չմնաց որ անոր բարեկամ ըլլայ։ Այն առեն չատ ափսոսցաւ, զղջաց իր ըրածներուն, բայց անցած էր։

Տղայ մը իր ընկերներուն սիրելի ըլլալու և անոնց բարեկամութիւնը ձեռք բերելու համար պէտք է ազնիւ ըլլայ անոնց հետ և յարգէ զանոնք։

6. Առած. Անոնք որ ուրիշները կը ծաղրեն, աւելի գէշ են քան անոնք որ կը ծաղրուին։

---

5. ԽՕՍԱՑՈՒԹԻՒՆ. — **Ցարգանք դէպի ընկերական հասատութիւնները.** — Դիտէք որ թէ՛ քաղաքներու, թէ՛ գիւղերու մէջ մարդիկ կան որ գիշեր ցորեկ կը պատին, կը հսկեն որ գողութիւն մը չըլլայ, որ մարդիկ իրարու գէշութիւն մը չընեն, իսկ երբ մէկը գողութիւն ընէ կամ մէկու մը վնաս մը հասցնէ, կը բռնեն այն մարդը, կը տանին բանտը կը դնեն, կը պատժեն։ Այդ մարդիկներէն չատերը սուր մ'ունին որ կապուած է իրենց մէջքը, չատերը կը նստին մեծ չէնքի մը մէջ և ո՛վ որ երթայ իրենց բողոքէ, մտիկ կ'ընեն։

Հապա այնպիսի վայրենի երկիրներ կան ուր ամէն մարդ իր ուզածը կ'ընէ, ուրիշները կը կողոպտէ և պաշտպանող մը չկայ։ Մենք չատ ուրախ ըլլալու ենք որ այն մարդիկ մեր երկիրը կը պաշտպանեն, ուրեմն պէտք է յարգենք զանոնք, պէտք է պատիւ ընենք անոնց, որովհետև անոնք կը պաշտպանեն մեզ։

7. Առած. Երբ ծառ մը միտ միևնակ է, հովը կը փչէ եւ կը բաշէ անոր տերևները, այսպէս ալ երբ մարդ

միամիևնակ է եւ պաշտպան չունի, կը վնասուի։

8. Առած. Պէտք է աշխատիլ ու մեր ձեռքին եկածը ընենք ուրիշներուն օգնելու համար։

Գ. ԽՕՍԱՑՈՒԹԻՒՆ. — **Բարեգործութիւնը.** — Տիկին մը ճամբուն վրայ հանդիպեցաւ պզտիկ՝ կայտառ տղի մը, որ ձեռքը իրեն երկնցուց բան մ'ուզելու համար։ Բարի տիկինը անոր ձեռքը դրաւ տասը փարանոց մը, յետոյ ըսաւ, «Տղա՛ս, դուն առողջ ես ու չեմ կարծեր որ ծոյլ ըլլաս, քեզի համար ամօթ է որ փողոցները կեցած՝ ուրիշներուն ձեռք երկնցընես, եկո՛ւր ինծի հետ մեր տունը, հոն մեր սպասուհին կ'օգնես, փայտ կը բերես, գետինը կը մաքրես ու ես ամէն օր քեզի տակ կուտամ։ Այսպէս, փոխանակ մուրալու, քու աշխատութեամբ կը վաստակիս ու առած տակդ կը տանիս մօրդ»։ Տղան չատ ուրախ եղաւ։ Բարի կինը չթողուց որ անի մուրացկան ըլլայ և տղան աշխատելով մարդ եղաւ։

9. Առած. Աւելի աղեկ է որչափ պէտք է այնչափ տալ, քան թէ շատ տալ։

Դ. ԽՕՍԱՑՈՒԹԻՒՆ. — **Ընկերական կեանքի ուրախութիւնը.** — Մարդ այնքան չատ բարեկամներ կը գտնէ, որչափ աւելի չատ ընկերներու մէջ ապրի, չատերու հետ յարաբերութիւն ընէ. ասոր «ընկերական կեանք» կ'ըսեն։ Ընկերական կեանքը մարդուս չատ ուրախութիւններ կը պատճառէ, մարդ բարեկամներ կը չահի, որոնց կը պատմէ իր ցաւերը և ուրախութիւնները։

Ես պզտիկ ատենս ընկերակից մ'ունէի Սեդրաք անունով։ Այս տղան միշտ կ'ուզէր առանձին մնալ, ընկերներու հետ չէր ուզեր տեսնուիլ։ Իր հայրը ուզեց անոր այս դէշ բնաւորութիւնը ուղղել, ուստի ծառայի

մը հետ մէկտեղ զանի զրկեց իր մեծ ազարակը։ Հոն Սեդրաք առանձին մնաց. միամիտնակ կը պարտէր ծառերու տակ, գետին եղերքը կը կարդար, կը գրէր, ու միտնակ ճաշի ժամանակ ծառային երեսը կը տեսնէր։

Սեդրաք նախ շատ ուրախ եղաւ այս առանձին կեանքէն, գետին ճուկ որսալու համար կեռ և ուռկան չմնաց ու կը զբաղէր։ Բայց շատ չանցած՝ սկսաւ ամէն բանէ ձանձրանալ, ու տունը, քաղաքը, ընկերները միտքը ինկան։

Սեդրաք ուզեց իր ընկերներուն նամակ գրել, բայց այնքան հպարտ էր՝ որ միտքը փոխեց նորէն։ Հիմա ի՞նչ ընելու էր, միամիտնակ՝ ծառերն ալ, գետինն ալ, դաշտերն ալ իր աչքէն ինկան. սկսաւ տրտմիլ. չէ՛, ա՛լ անտանելի էր այս միտնակութիւնը։ Սեդրաք սկսաւ սաստիկ կարօտանալ տունը, ընկերները։

Վերջապէս եղաւ նամակ մը գրեց հօրը և խնդրեց որ զինքը ետ կանչէ։

Հայրը հասկցաւ որ տղան զղջացած է, ետ բերաւ զայն։ Սեդրաքին սիրտը շատ հանգստացաւ և սկսաւ ուրախանալ իր ընկերներուն մէջ։ Այն տեսն հասկցաւ թէ առանձին ապրիլը ի՛նչ գէշ բան է եղեր, և ընկերութեան մէջ ապրիլ ո՛րչափ աղէկ։

10. Առած. *Եթէ մարդիկ հողը չմշակեն, անոր վրայ փուշերու անպիտան խոտեր միմիայն կը բուսնին. այսպէս ալ եթէ մարդ միս միմիայն ապրի, իր զգացումները չեն մշակուիր եւ եսասէր ու ծոյլ կ'ըլլայ։*

11. Առած. *Զար բաներեն միշտ հեռացիր, բարի բաները սիրեցիր։*

Տ. խօսակցութիւն. — Ընկերականութիւնը բարոյականացուցիչ է. — *Երբ տղայ մը յանցանք մը գործէ, անմիջապէս չորս կողմը կը նայի թէ մէկը զինքը տեսա՞ւ*

թէ ոչ։ Ասել է թէ ընկերները մեզ կը զգուշացնեն գէշ բան մ'ընելէ։ Ասել է թէ մենք, երբ իրարու հետ ապրինք, կը ջանանք որ մէկը գէշութիւն մը չտեսնէ մեր վրայ։

Երբ ուսուցիչը ձեզմէ մէկը գոլէ դասարանին մէջ և ուրիշներուն իրեւ օրինակ ցուցնէ, որչա՞փ ուրախ կ'ըլլայ անի և անկէ ետքը որչա՞փ կ'աշխատի որ նորէն այդ գովեստին արժանանայ։ Դպրոցին այս գրասեղաններուն վրայ է որ դուք ամէնէն առաջ կը մտածէք աղէկ ըլլալ, լաւ աշխատիլ ընկերներու օգնել, կը խորհիք որ գէշ բան մը չընէք, որ չըլլայ թէ ձեր ընկերները ձեզի՝ գէշ տղայ է, ըսեն։ Այսպէս է աշխարհի մէջ ալ։ Երբ մեծնաք, մարդ ըլլաք, պիտի ուզէք միշտ աղէկութիւն ընել, միշտ օգտակար ըլլալ, որ մարդիկ ձեզի համար «աղէկ է» ըսեն, ձեզ գովեն՝ սիրեն։ Ուրեմն ընկերներու մէջ ապրիլ, ընկերական կեանք ունենալ մարդը բարի կ'ընէ, ուրիշ խօսքով՝ մարդը պարկեշտ ու բարոյական կ'ընէ։

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ

Յայտնի է որ բոլոր մարդիկ իրարու համար կ'աշխատին, իրարու օգտակար կ'ըլլան, սոր համար մեր պարտքն է որ սիրենք բոլոր մարդիկը և մեր ձեռքէն եկածը ընենք անոնց օգտակար ըլլալու համար՝ պէտք է աշխատինք անուշ ու ազնիւ բնաւորութիւն ունենալու։ Պէտք է սիրենք մեր ընկերները և ամէնեւին չծիծաղինք անոնց սխալներուն վրայ, չծաղրենք զանոնք։ Պէտք է յարգենք այն մարդիկը որ մեր կեանքի ապահովութեան համար կը հոգեն։ Աղքատներուն համար բարեսիրտ ըլլալու է եւ անոնց որվեցընելու է որ աշխատին։ Ընկերական կեանքը մեզի շատ բարիքներ կուտայ, պէտք է սիրենք զայն և աշխատինք ուրիշին օգտակար ըլլալու։

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՒՆԱՐԿՈՒԹԻՒՆ

1. **Ընդհ. Բուէարկութեան** *վրայ խօսելցանք նախորդ դասի մը մէջ* (*Բ. Պրակ, էջ* 10) : *Այդ գործողութիւնը կատարելու համար*, բուէրդրեր *կը ղրկուին թաղեցիներուն*, *որոնք իրենց յարմար դատած անձերուն անունը գրելով՝* անձամբ *կը տանին կամ* նամակով *կը ղրկեն եկեղեցի* :

Ուսուցիչը այս գործողութիւնը տղոց աւելի աղէկ հասկցնելու առիթ մը կը փնտռէր, *և ահա այդ առիթը ինքնաբերաբար ներկայացաւ* :

2. Օր մը դպրոցին տղաքը *իրարանցումի մէջ էին* : *Որոշուած էր նոյն օրը պտոյտի ելլել*, *բայց տղաքը չէին կրնար համաձայնիլ թէ ո՛ւր երթալու էին՝ աւելի լաւ զուարճանալու համար* : *Մէկը՝ այս ինչ տեղը երթանք*, *կ'ըսէր*, *միւսը՝ այն ինչ տեղը* :

«Ի՞նչպէս ընելու ենք, Պ. Դաստիարակ, համաձայնութեամբ տեղ մը ընտրելու համար :

— Շա՛տ պարզ է, տղաքս, ըսաւ դաստիարակը : Բուէարկութիւն ըրէք. ամէնքդ ալ մեր թղթերու վրայ գրեցէք ձեր ուզած տեղին անունը : Մեծ մասը ո՛ր տեղ որ գրած ըլլայ, հոն կ'երթաք :

Տղաքը սաստ ա՛լ ուրախցնելու պատճառ չունեցան. բայց նաև սորվեցան թէ ի՞նչ է բուէարկելը :

1. Ի՞նչպէս կ'ըլլայ բուէարկութիւնը : 2. — Ուսուցիչը ի՞նչպէս բացատրեց բուէարկելուն եղանակը : (*Պատմեցէք դպրոցին մէջ պատահածը*) :

2. ԴԱՍ. — ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. **Նախարարութիւններ**. — *Բ. Պրակ, Դաս 4ին մէջ ըսինք թէ պետութեան գործերը վարող պաշտօնատարներէ կը կազմուի կառավարութիւնը* : *Այդ պաշտօնատարները կ'ընտրէ Վեհ. Կայսրը* : *Անոր իրատեսով կը անօրինուին պետութեան ամէն գործերը*, *և այդ պաշտօնատարներուն հրամանները յարգելու պարտաւոր է ամէն մարդ* :

2. *Այդ նախարարութիւններն են*.

1. *Մեծ Եպարքոս* (Սատրա'զամ)
2. *Կրօնապետ* (Շէյխ իւլ իսլամ)
3. *Դատական Գործերու Նախարար* (Ատլիյէ Նազրը)
4. *Պատերազմական Նախարար* (Հարպիյէ Նազրը)
5. *Ծովային Նախարար* (Պահրիյէ Նազրը)
6. *Պետական Խորհուրդ* (Շուրայի Տեօվլէթ)
7. *Ներքին Գործերու Նախարար* (Տախիլիյէ Նազրը)
8. *Կոտակներու* » (Էվգաֆ »)
9. *Արտաքին* » » (Խարիճիյէ »)
10. *Ելմտական* » » (Մալիյէ »)
11. *Կրթական* » » (Մէարիֆ »)
12. *Առևտրական և հանրօգուտ շինութեանց Նախարար* (Թիճարէթ վէ Նաֆա'ա Նազրը)
13. *Անտառներու, հանքերու և երկրագործութեան Նախարար* (Որման, մաէնի վէ զրաաթ Նազրը)

3. *Գլխաւոր նախարարները* (վիւքեյա) *գումարուելով՝ կը կազմեն Նախարարներու Խորհուրդը* (Մէճլիսի խասսը Վիւքեյա) *որ կը անօրինէ Պետութեան կարեւոր գործերը*:

1. Որոնցմէ՞ կը կազմուի կառավարութիւնը. — Ո՞վ կ'ընտրէ նախարարները. — 2. Որո՞նք են գլխաւոր նախարարներ. — 3. Որոնցմէ՞ կը կազմուի նախարարներու խորհուրդը, եւ ի՞նչ տեսակ գործեր կը տնօրինէ :

3. ԴԱՍ. — ՎԵՐԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

եւ երկրորդական նախարարութիւններ

1. Վերատեսչութիւններ. — *Այս գլխաւոր նախարարութիւններէն զատ, կան այլեւայլ վերատեսչութիւններ եւ պաշտօնատարներ ալ.*

1. *Թեղանոթարանի Վերատեսչութիւն* (Թօրիանէ Միւշիրի)
2. *Թղթատարական* » (Փոսքա վէ Թէլէկրաֆ)
3. *Տուրքերու* » (Վէրկի Էմանէթի)
4. *Մաքսային* » (Ռուսումաք »)
5. *Մարդահամարի* » (Նուֆուս Իսարէսի)
6. *Կալուածներու* » (Էմլեաք »)
7. *Թոքիրդական Մեծ-Եպարքոսի* (Միւսթէշար Սաադր ալի)
8. *Տպագրական Տեսչութիւն* (Մաթպուաթ Իսարէսի)
9. *Կայս. Անձն. Դանձին Նախարար.* (Խազինէի Խասսա)
10. *Կրօնական Գործերու* » (Մէզահիպ Միւսիրիյէրի)
11. *Ոստիկանական Նախարարութիւն* (Զապթիյէ Նազըրը)
12. *Փողերանոցի Վերատեսչութիւն* (Զարպհանէ »)
13. *Նաւահանգստի* » (Լիմանի Իսարէսի)
14. *Կայս. Դիւանան* (Բասաբհանէ)
15. *Շնութիւններու Թանգարան* (Միւզէհանէ)

1. Երկրորդական Վերատեսչութիւններ որո՞նք են: (*Բացատրել թէ ի՞նչ գործեր կը տնօրինեն անոնք*) :

---

4. ԴԱՍ. — ՕՐԷՆՔԸ

1. Օրէնք. — *Երբ ձեր ծնողքը այս ինչ բանը ընել կը հրամայեն կամ կ'արգիլեն ձեզի՝ չէք ուզեր անոնց վիշտ պատճառել, և կը հնազանդիք :*

2. *Այսպէս է նաեւ երկրի մը ժողովուրդին համար : Բարի քաղաքացին ա՛ն է որ կը հնազանդի Օրէնքին և հաւատարմութեամբ կը կատարէ զայն :*

3. *Օրէնքները մեր ամէնուն օգտին համար դրուած են և մեծ յանցանք է անոնց դէմ գործել :*

4. *Զաղացպանի մը որդին, Սարգիս, տանը հինգ տարեկան տղայ մ'էր. չար չէր, բայց մէկ պակասութիւն մը ունէր որ իր ծնողքներուն շատ դժուար կուգար. — անհնազանդ էր և կարելի չէր եղած զայն ուղղել՝ ո՛չ յանդիմանութեամբ, ո՛չ պատիժով :*

Դպրոցին մէջ ալ նոյնն էր. Սարգիս ինչպէս ծնողքին՝ այնպէս ալ վարժապետին խօսքը մտիկ չէր ըներ. և շատ անգամներ ասոր համար պատժուեցաւ :

Երբ մեծցաւ ու մարդ եղաւ, այն ատեն էր որ հասկցաւ թէ պէտք է Օրէնքներուն հնազանդիլ :

Շատ անգամ, պաշտօնական լրագիրներու մէջ կամ պատերուն վրայ ժողովուրդին օգտակար բաներ կը ծանուցանէր Թագաւորութիւնը : Սարգիս փոյթ չէր ըներ անոնք կարդալու, սորվելու, գործադրելու : Այս անհոգութեան զոհ տուաւ իր շունը՝ Թամպիկը: Հրաման եղած էր որ շուն ունեցողները փողոց չհանեն, վասնզի գեղին մտերը կատղած շուն մը տեսնուեր է որ գեղին շուները խածեր վիրաւորեր է :

Սարգիս իր Թամպիկը փողոց հանած էր, մէկ մ'ալ խեղճ կենդանին արիւնածախ տուն դարձաւ :

Այն ատեն միայն հասկցաւ Սարգիս թէ պէտք է հրամաններուն հնազանդիլ. բայց բանը բանէն անցած էր : Հարկ եղաւ ապսպնել Թամպիկը, որպէսզի ուրիշ շուներու ալ չտայ իր հիւանդութիւնը :

1. Ի՞նչ ընել պարտիք ձեր ծնողին. — 2. Բարի քաղաքացին ի՞նչ կ'ընէ. — 3. Ինչո՞ւ հնազանդելու ենք օրէնքին. — 4. Պատմեցէք Սարգիսին եւ իր շան պատմութիւնը :

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

1. Հոգեգալուստ. — 1. — Յարութիւնէն քառասուն օր ետք, երբ Քրիստոս Երկինք համբարձաւ, արդէն խոստացած էր Ս. Հոգին առաքեալներուն ղրկել որ զանոնք լուսաւորէ ու հրահանգէ: 2.—Մասնիչ Յուդային տեղ, Մատթիան առաքեալ ընտրուեցաւ: 3. — Երբ յիսուներորդ (Պենտեկոստէ) օրը, Համբարձումէն 10 օր ետք, ժողոված էին վերնատան մէջ, սաստիկ շարժում մ'եղաւ, և Ս. Հոգին հրեղէն լեզուներով իջաւ առաքեալներուն վրայ: Առաքեալները Ս. Հոգին ընդունելով՝ սկսան զանազան լեզուներ խօսիլ:

4. — Թադէոս առաքեալ այս միջոցին գնաց Հայերուն մէջ, Տիրոջ խոստման համեմատ, և սկսաւ քարոզել: Հաւատացեալներն առաջին անգամ Անտիոքի մէջ քրիստոնեայ ըսուեցան:

5.—Այս ատենն կ'երգուի «Առաքելոյ Աղաւնոյ» շարականը, ու կը կարդացուի Ներսէս Լամբրոնացիին գրած մէկ սքանչելի ճառը:

2. Առաքեալներուն գործերը. 1.—Մատթէոս ու Յովհաննէս առաքեալներն ու աշակերտներէն Մարկոս ու Ղուկասը գրի առին Յիսուսի Քրիստոսի կեանքն ու աստուածային պատուէրները՝ չորս Աւետարանի մէջ:

Առաքեալները Ս. Հոգիին ներշնչումով սահմանեցին որ Քրիստոնեաները չաբաթի օրուան տեղ կիրակին սուրբ պահեն իբրև յիշատակ Յիսուսի Յարութեան և Ս. Հոգիին վերնատուն իջնելուն:

2. — Առաքեալները Քրիստոսէն սորվելով եկեղեցիին խորհուրդներն ու արարողութիւնները՝ աւանդեցին իրենց յաջորդներուն, և ցրուեցան աշխարհիս զանազան ազգերուն մէջ, տարածելու Քրիստոսի Ս. Աւետարանը: 3. — Յովհաննէսէն զատ, առաքեալներն ամէնքն ալ Յիսուսի անունին համար նահատակուելով մեռան:

Քրիստոս ի՞նչ խոստացաւ. — Յուդայի տեղ ո՞վ ընտրուեցաւ. — Առաքեալներն երբ Ս. Հոգին ընդունեցին՝ ի՞նչ ընել սկսան. — Ո՞վ է Հայոց առաքեալը. — Այս տօնին ի՞նչ կ'երգուի. — Որո՞նք գրի առին Յիսուսին կեանքը. — Առաքեալները եկեղեցիին խորհուրդներն ուրկէ՞ սորվեցան. — Առաքեալներն որո՞ւ անունով մեռան:

---

2. ԴԱՍ. = ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

3. Տիրամօր մահը. — 1. Յիսուս խաչին վրայէն պատուիրեց Յովհաննէս առաքեալին որ իր մօրը խնամք տանի: Այն օրէն ետքը, մինչև 16 տարի չարունակ, Մարիամ Աստուածամայրը Յովհաննէսին քով կեցաւ:

2. Երբ Ս. Կոյսը մեռաւ, առաքեալները թաղեցին զինքը Գեթսեմանի ձորը, ուր Յուդա զինուորներուն ձեռքը մատնած էր Յիսուսը: Աստուածածնի մահուան ատեն, Բարթուղիմէոս առաքեալը ներկայ չէր:

3. Երբ Բարթուղիմէոս Երուսաղէմ եկաւ ու իմացաւ Տիրամօր մահը, չատ տրտմեցաւ, եւ ուզեց տեսնել անոր գերեզմանը: Առաքեալները Գեթսեմանի պարտէզը տարին զինքը, բայց մ'ըքան զարմացան երբ գերեզմանը բացին ու պարապ գտան, ինչու որ Յիսուս հրեշտակներու ձեռքով իր մօր մարմինը երկինք տարեր էր, այսինքն «վերափոխեր» էր:

4. Բարթուղիմէոս չատ կը ցաւէր որ Տիրամայրը չը կրցաւ տեսնել: Միւս առաքեալները զինք մխիթարե-

լու համար, Աստուածածնի պատկերը ընծայեցին անոր։ Բարթուղիմէոս առաքեալը վանք մը չինեց և այս պատկերը հոն դրաւ։

5. Վերափոխումի ոտնը հանդիսաւոր կը կատարուի Հայ եկեղեցիներուն մէջ և Աստուածածնէն կը խնդրենք որ բարեխօս ըլլայ իր որդի Յիսուս Քրիստոսին. ասոր համար կ'երգենք.

« Փառաւորեայ Եւ օրհնեայ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր որդւոյ քո Եւ Աստուծոյ մերոյ »։

Աստուածածնի չարականն է « Անկանիմք առաջի քո Աստուածածին, » եւայլն։

6. Վերափոխման ոտնին, խաղող կ'օրհնուի եկեղեցիին մէջ։

Տիրամայրը որո՞ւ հով մնաց մինչեւ իր մահը. — Ո՞ւր թաղուեցաւ. — Բարթուղիմէոս՝ երբ Երուսաղէմ եկաւ, ի՞նչ ըրաւ. — Առաքեալները ի՞նչ տուին անոր. — Ի՞նչ կը խնդրենք Աստուածածինէն. — Ո՞ւր է Ս. Կոյսին շարականը. — Խաղողը ե՞րբ կ'օրհնուի։

---

3. ԴԱՍ. — Ս. ԱԲԳԱՐ

4. Ս. Աբգարի հիւանդութիւնը. — 1. Աբգար հիւանդութիւն մը ունեցաւ որ եօթը տարի տեւեց և ամէն դեղ գործածեր՝ բայց չէր առողջացեր։ Աբգար լսեց որ Հրէաստանի մէջ Յիսուս ամէն հիւանդութիւն կը բժշկէ առանց դեղի։ Նամակ գրեց Յիսուսին որ գայ և զինքն ալ բժշկէ։ Ահա այդ նամակը.

2. «Լսեցի որ դուն առանց դեղի կը բժշկես հիւանդները, կոյրերուն աչքը կը բանաս, կաղերը կը քալեցնես, բորոտները կը բժշկես, սատանաները կը հալածես, երկար տարին հիւանդ եղողներն ալ կ'աղէկցնես ու մինչեւ անգամ մեռելները կ'ողջցնես։ Աս բաները լսելով՝ ինքնիրմէս ըսի որ երկինքէն իջած Աստուած ես դուն և կամ Աստուծոյ որդին ես։ Կ'աղաչեմ, եկի՛ր հոս եկուր, իս բժշկէ։ Նոյնպէս լսեցի որ Հրէաները քեզ կը նեղեն. ես պզտիկ կալուած մ'ունիմ, իմ քով եկուր, երկուքիս ալ կը բաւէ իմ ունեցածս և հոս մարդ չի նեղեր քեզ։»

3. Աբգար աս նամակը յատուկ մարդոյ ձեռքով ղրկեց և անոնց պատուիրեց ու ըսաւ. « Եթէ Յիսուս ձեզի հետ չկրնայ գալ, անոր պատկերը քաշեցէք ինծի բերէք.» ու իր հրաւիրակներուն հետ նկարիչ մ'ալ ղրկեց։

Ի՞նչպէս մարդ էր Աբգար։ — Ասկէ քանի՞ տարի առաջ կ'ապրէր։ — Ի՞նչ գրեց Յիսուսին։ — Հրաւիրակներուն ի՞նչ պատուիրեց։

---

4. ԴԱՍ. — ԴԱՍՏԱՌԱԿԸ

5. Յիսուսի պատասխանը. — 1. Հրաւիրակները նամակը Յիսուսին տարին։ Ան չկրցաւ գալ և սա պատասխանը գրեց Աբգարին.

« Երանի՛ անոր որ զիս չէ տեսեր՝ բայց կը հաւատայ ինծի։ Կը գրես որ քու քով գամ։ Չեմ կրնար, ինչու որ ես հանդիսաւ ապրելու համար չեմ եկած՝ այլ չարչարուելու, խաչուելու։ Երբ աս գործերս լմնցընեմ, Հայր Աստուծոյ քով պիտի երթամ։ Բայց իմ հարբարձումէս վերջը, աշակերտներէս մէկը կը ղրկեմ որ գայ քեզ բժշկէ և քու ժողովուրդիդ ալ կեանք պարգեւէ։»

2. Պատուիրակներուն հետ գացող նկարիչը երբ տեսաւ որ Յիսուս չի գար, սկսաւ անոր պատկերը գծագրել, բայց չէր կրնար։ Յիսուս իր մօտը կանչեց նկարիչը, կտոր մը ճերմակ կտաւ առաւ, իր երեսին մօտեցուց և

անա նոյն կատարին վրայ նկարուեցաւ իր պատկերը։ Յիսուս այդ պատկերը տուաւ նկարիչին որ Աբգարին տանի։

Ա՛ս պատկերն է անա դատառակ *կամ* անձեռագործ պատկեր *բառածը։*

Հրաւիրակները ո՞ւր գացին. — Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ Աբգարի նամակին. — Պատմեցէք թէ ի՞նչպէս նկարուեցաւ Յիսուսի պատկերը՝ մոմուր կտաւին վրայ։

---

5. ԴԱՍ. — ՀԱՅԵՐՈՒՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՁԸ

Գ. Թադէոս Հայերուն առաջին Լուսաւորիչը. — 1. *Հայերը 2492 տարի քուրմերու և կուռքերու ազդեցութեան տակ մնացին մինչև որ, Քրիստոսի Համբարձումէն ետքը, Թադէոս առաքեալ Հայերուն մէջ եկաւ, Քրիստոսի 34 թուականին, և քրիստոնէութիւնը քարոզեց։*

2.—*Երբ Թադէոս մտաւ Աբգարի ապարանքը, Աբգար երեսի վրայ ինկաւ, երկրպագութիւն ըրաւ։ Թադէոս քրիստոնեայ ըրաւ Աբգարն ալ և իր քաղաքացիներն ալ։ Ձեռքը դրաւ Աբգարին գլխուն և բժշկեց, նոյնպէս շատ մը հիւանդներ։ Ասոր վրայ շատեր Քրիստոսի հաւատացին և մկրտուեցան։ Թադէոս ուրիշ տեղեր ալ պիտի երթար քարոզելու, ուստի Թադ չմնաց Ադդէ անուն անձը եպիսկոպոս ձեռնադրեց և անցաւ դնաց Ս. Աբգարի քեռորդի Սանատրուկին քով, և ան ալ իր մարդերովը քրիստոնեայ ըրաւ մկրտեց։ Նոյնպէս և Սանատրուկին աղջիկը՝ Սանդուխտը։*

3.—*Սանատրուկ Աբգարի մահէն վերջը նորէն կռապաշտ եղաւ և սկսաւ նահատակել քրիստոնեաները։ Սանդուխտին ալ ըսաւ որ ուրանայ նոր կրօնքը, բայց ան չհնազանդեցաւ, ըսելով «Ես կուռք չեմ պաշտեր. կը*

մեռնիմ՝ բայց կուռք չե՛մ պաշտեր»։ Հայրը իր աղջիկն ալ, Թադէոս առաքեալն ալ նահատակել տուաւ։

Այսպէս՝ թէ՛ ուսուցիչը (Թադէոսը) և թէ՛ աշակերտուհին (Սանդուխտ կոյսը) յոժարեցան մեռնիլ՝ քան թէ կուռքերուն երկրպագել։

Հայերը Քրիստոսէն առաջ հանի՞ տարի կռապաշտ մնացին։ Համբարձումէն ետքը ո՞վ եկաւ Հայերուն քով։ — Ի՞նչ ըրաւ Թադէոս Հայերուն մէջ։ Ո՞վ էր Ադդէ և ի՞նչ եղաւ։ Ո՞վ էր Սանատրուկ. իսկ Սանդո՞ւխտ։ — Սանատրուկ ի՞նչ ըրաւ Աբգարի մահէն ետքը։ Ի՞նչ հրաման տուաւ Սանդուխտին։ Ա՞ն ինչ ըսաւ։ Ի՞նչ վախճան ունեցան Սանդուխտ ու Թադէոս։

---

6. ԴԱՍ. — Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ

1. Առաջին լուսաւորիչներ. — *Թադէոսի մահէն վերջը, Յիսուսի առաքեալներէն Բարթողիմէոսն ալ եկաւ Հայերուն մէջ և քարոզեց քրիստոնէութիւնը։ Իր հետը բերաւ Ս. Կոյս Մարիամին պատկերը (2⁰ Դաս, 4⁰ հատուած, էջ 13-14). Տիզբիս գետին եզերքը վանք մը շինեց՝ Աստուածածնին անունով՝ և այն պատկերը հոն դրաւ։*

2. *Ս. Թադէոս և Բարթողիմէոս առաջին անգամ եկան մեր կողմերը քրիստոնէութիւնը քարոզելու և Հայերը լուսաւորելու։ Ասոր համար զանոնք կ՚անուանենք* առաջին (նախկին) լուսաւորիչներ։

3. *Անոնք մեզի գեղեցիկ օրինակ տուած են Քրիստոսի սիրուն ու անձնուիրութեան համար, մենք ալ ամէն տարի անոնց անունը կը յիշենք եկեղեցիին մէջ և կը տօնենք։ Նոյն օրը կ՚երգենք սա չարականները.*

«Հայրատունկ այգւոյն հրեղեն պարիսպ եւ բարձր աշտարակք, ոսկեղէն բաժակ եւ ժիր մատուռակք մեր բազմեալց, հա՛ր հոգեւորք, Բարթուղիմէոս եւ Թադէոս, բարեխօս լերուք առ տէր վասն անձանց մերոց»։

6549
50

Թագաւոր երկնաւոր, Զեկեղեցի քո անշարժ պահեա՛ եւ զերկրաբպագուս անուանեալդ քոում Պահեա՛ ի խաղաղութեան։

Թադէոսէն եօթը ո՞վ եկաւ մեր մէջ, ինչ բերաւ, ո՞ւր դրաւ Ս. Կոյսին պատկերը։ — Ի՞նչ ըսել է *Լուսաւորիչ*։ — Ինչո՞ւ Թադէոս եւ Բարթուղիմէոս «նախկին լուսաւորիչ» կ'ըսուին։ — Ի՞նչ կ'ընենք անոնց յիշատակին համար։ — Ի՞նչ շարականներ կ'երգենք Թադէոսի եւ Բարթուղիմէոսի տօնին օրը։

---

7. ԴԱՍ

ՀԱՅՈՑ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԴԱՐՁԸ, Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

1. *Հայոց բոլորական դարձն եղաւ 311 ին Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով որ Անակին տղան էր։ Ս. Գրիգոր Եւթաղ անուն մէկու մը ձեռքով Կեսարիա տարուելով՝ հոն ուսում տրվեցաւ։*

2. **Ս. Գրիգորի չարչարանքը.** — *Տրդատ Հռոմի մէջ հեթանոսական դաղափարներով մեծցած եւ քրիստոնէութեան ոխերիմ թշնամի էր։ Երբ Հռոմէն եկաւ հիմակուան Երզնկա քաղաքը, խմանալով որ Ս. Գրիգոր քրիստոնեայ է, ուզեց զայն տանջանքներով ստիպել որ քրիստոնէութիւնը թողու։ Անահիտին զոհ մատուցած տաճն, Տրդատ հրամայեց Գրիգորին որ ինքն ալ նոյն չատուածուհիին ծաղկէ պսակ նուիրէ։*

3. **Խոր վիրապ մտնելը.** — *Երբ Գրիգոր յանձն չառաւ, Տրդատ երկարօրէն հարցուփորձելէ ետք, զանազան դառն ու անտանելի տանջանքներով ուզեց անոր հաստատամտութիւնը խախտել, բայց անկարելի ըլլալով՝ Տրդատ հրամայեց որ գոբ մը նետեն։ Այնուհետեւ բոլոր քրիստոնեաներու դէմ սաստիկ հալածանք հանեց։*

Հայերը ամբողջովին ե՞րբ քրիստոնեայ եղան։ — Ո՞վ էր Տրդատ։ — Ո՞ւր կ'ապրէր։ — Ո՞ւր եկաւ Գրիգորին հետ։ — Ի՞նչ է Անահիտ։ Ո՞ւր կը գտնուէր։ — Ի՞նչ բրաւ Տրդատ։ — Իսկ Գրիգո՞ր։ — Ի՞նչ հրամայեց Տրդատ։ — Ի՞նչ ըսել է *խոր վիրապ*։

8. ԴԱՍ. ԱՄՓՈՓՈՒՄ Գ. ԱՄՍՈՒԱՆ

Հոգեզարուստ. — *Յարութենէն 50 օր ետքը, առաքեալները վերնատունն հաւաքուած էին։ Ս. Հոգին իջաւ անոնց վրայ և սկսան զանազան լեզուներ խօսիլ։ Թադէոս Հայերուն մէջ եկաւ և քարոզեց։ Մատթէոս, Յովհաննէս, Մարկոս և Ղուկաս գրեցին չորս աւետարանները։ Առաքեալները որոշեցին կիրակի օրը սուրբ պահել և ոչ թէ շաբաթ։ Ետքը ցրուեցան ամէն կողմ և տարածեցին քրիստոնէութիւնը։*

Վերափոխում։ — *Տիրամայրը մեռնելուն, աշակերտները զինք թաղեցին։ Հրեշտակներ անոր մարմինը երկինք վերափոխեցին։ Բարթուղիմէոս Ս. Կոյսին պատկերը առաւ իրը ընծայ։ Վերափոխումը կը տօնէ մեր եկեղեցին և խաղող կ'օրհնէ նոյն օրը։*

Ս. Աբգար, *լսելով Յիսուսի անունը, անոր նամակ գրեց և յատուկ դեսպաններով հրաւիրեց որ գայ իր մօտ։*

Դատաւոր. — *Յիսուս պատասխան գրեց թէ չի կրնար գալ։ Իր պատկերը կտաւի վրայ առնելով՝ նը-կարիչին հետ ղրկեց Աբգարին։*

Առաջին դարձ. — *Հայերը 24 դար կռապաշտ էին։ Թադէոս եկաւ քրիստոնեայ ըրաւ զիրենք, Աղդէն եպիսկոպոս ձեռնադրեց։ Սանատրուկ ուրացաւ քրիստոնէութիւնը և նահատակեց շատ մարդիկ՝ նոյն իսկ իր աղջիկն ու Ս. Թադէոսը։*

Ս. Բարթուղիմէոսը *Թադէոսէն ետքը եկաւ հայերուն մէջ քարոզեց։ Անոր համար երկուքը կը կոչուին մեր Առաջին Լուսաւորիչները։*

Հայերուն ամբողջական դարձը *եղաւ Գրիգոր Լուսաւորիչին ձեռքով։ Տրդատ կռապաշտ էր, Անահիտին զոհ կ'ընծայէր։ Գրիգոր մերժեց Անահիտը պաշտել, ասոր համար Տրդատ չարչարել ու խոր վիրապը ձգել տուաւ Ս. Գրիգորը։*

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — Կ. ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐԸ (Շար.)

1. **Գում-Գափու.** — *Պոլսոյ հարաւակողմը Մարմարայի եղերքն է Գում-Գափու։ Աս թաղին մէջ կը բնակին Թուրքեր, Հայեր, Յոյներ։*

Հոս է Մայր եկեղեցին, Պատրիարքարանը և Երուսաղէմաւոնը, ինչպէս և Պէզճեան Մայր վարժարանը։

Բուն Գում-Գափուէն դատ, կայ Գում-Գափուի Դուրսի թաղը, ուր ունինք Ս. Յարութիւն եկեղեցին։

2. **Կէտիկ-փաշա.** — *Անոր վերի կողմը, բլուրին վրայ է Կէտիկ-Փաշա թաղը, ուր Ս. Յովհաննէս Աւետարանիչ եկեղեցին և Ս. Մեսրոպեան վարժարանը։*

3. **Լանկա.** — *Հարաւակողմն է և երկու դուռ ունի. Տաւուտ-Փաշա և Եէնի-Գափու։*

4. **Եէնի-Գափու.** — *Նոյնպէս Մարմարայի եղերքն է։ Հոս ունինք Ս. Թադէոս և Բարթուղիմէոս Առաքեալներու անունով եկեղեցին, և վարժարանը։*

5. *Երկաթուղիի գիծը կը սկսի Սիրքէճիէն և Գում-Գափուի ու Եէնի-Գափուի առջևէն անցնելով՝ կ'երթայ Սամաթիա, Եէնի-Գուլէ, Մաքրիքէօյ և Այ-Սթէֆանօ։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 1. Ո՞ւր է Գում-Գափու։ Հոն ի՞նչ շէնքեր կան։ — Ո՞ւր է Ս. Յարութիւն եկեղեցին։ 2—4. Որո՞նք են Կէտիկ-Փաշայի, Գում-Գափուի Դուսի եւ Եէնի-Գափուի եկեղեցիներն ու վարժարանները։ — 5. Ռումէլիի երկաթուղին Սիրքէճիէն սկսեալ ո՞ր տեղեր կայարան ունի։

2. ԴԱՍ. — ՊՈԼՍՈՅ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԸ

6. **Արուարձան ու Գեղ.** — *Պարիսպէն դուրս գտնուող թաղերը կը կոչուին* Արուարձան *ու* Գեղ։

Արուարձաններն են Կալաթիա, Բերա, Իսկիւտար, Գատը-Քէօյ։

7. **Կալաթա.** — *Պոլսոյ դիմաց, Ոսկեղջիւրի եղերքը, կը գտնուի* Կալաթա՝ *որ Ունգարանի կամուրջին ծայրը Ազապ-Գարու թաղէն սկսելով՝ կը տարածուի մինչեւ Գարաքէօյի կամրջին ծայրը Գարաքէօյ թաղը, անկէ ալ անդին մինչև Թօփհանէ ու Գալա թաշ թաղերը, Վոսվորի նեղուցին բերանը, Տոլմա պահչէ թաղին քով։ Թրամուէյի գիծ մը կը սկսի Ազապ-Գարուէն, ու ամբողջ Կալաթայէն անցնելէ ետք, կ'երկննայ մինչև Օրթաքէօյ։ Իսկ Գարաքէօյէն սկսելով՝ դէպ ի Բերայի թաղերը մինչև Շիշլի թրամուէյի ուրիշ երկու գիծեր։*

8. *Գարաքէօյի մէջ Փապուղի* (թիւնէլ) *մը կայ. սառերկրեայ կառախումբեր զոյգ գիծերու վրայէ կ'ելլեն, կ'իջնեն, Գարաքէօյէն Բերա, Գուլէ-Գարու։*

9. *Դալաթիա է « Ս. Գրիգոր Լուսաւորիչ » եկեղեցին, որ Կ. Պոլսոյ Հայերուն ամենէն հին եկեղեցին է։*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 6. Որո՞նք Արուարձան ու գեղ կը կոչուին. — 7. Ո՞ւր կը գտնուի Կալաթա. — Թրամուէի գիծն ո՞ւրկէ կրսկսի. — Գարաքէօյի թրամուէի գիծը մինչեւ ո՞ւր կ'երկարի. — 8. Ո՞ւր կը գտնուի փապուղին. — 9. Հայերը Կալաթայի մէջ ո՞ր եկեղեցին ունին։

---

3. ԴԱՍ. — ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԸ (Շար,)

10. **Բերա** *կամ* **Պէյ Օղլու.** — *Կը տարածուի Դալաթիոյ վերև բլրի մը սարահարթին ու կողերուն վրայ։*

Ունի՝ Գուլէ-Գարու, Թէփէ-Պաշի, Կալաթա-Սէրայ, Թագսիմ, Բանկալթի, Շիշլի թաղերը։

Բերայի մէջ կը բնակին Թուրքեր, Հայեր, Յոյներ ու Եւրոպացիներ :

11. Բուն Բերայի մէջ, Պալըզ-Փազարի կողմն է « Ս. Երրորդութիւն » եկեղեցին, որուն չրջափակին մէջ է Բերայի Աբեղատանոցը :

Թաքսիմի մէջ « Ս. Յարութիւն » որ նախ վայրաչէն էր և որուն կից էր անցեալ դարուն վերջերը Ազգ. Հիւանդանոցը : Քանի մը տարի առաջ Էսքեան վարժարանը չինուեցաւ հոս :

Բանկալթիի գերեզմանատան մէջ կայ « Ս. Գրիգոր Լուսաւորիչ » :

Ֆէրի-գիւղի մէջ կայ « Ս. Վարդան » եկեղեցին :

12. **Գասըմ-փաշա.** — Բերայի բլրին տակրոտը, Ազգապ-Գարուի քով, Ոսկեղջիւրի եզերքն է Գասըմ փաշա : Ծովեզերքը գրաւած է Թերսհանէ կոչուած պետական մեծ նաւարանը :

Հոս կը բնակին Թուրքեր, Հայեր ու Յոյներ :

Ունինք « Ս. Յակոբ Մծբնայ » եկեղեցին :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. 10. Ո՞ւր կը գտնուի Բերա. — Որո՞նք կը կազմեն Բերայի թաղերը. — Որո՞նք կը բնակին Բերայի մէջ. — 11. Բերայի մէջ քանի՞ եկեղեցի ունինք. 12. — Ո՞ւր է Գասըմ-փաշա. — Հոս որո՞նք կը բնակին. — Հոս ո՞ր եկեղեցին կայ :

---

4. ԴԱՍ. — ՊՈԼՍՈՅ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԸ (Շար.)

13. **Խասգեղ.** — Գասըմ-Բաչայի կռնակը, Ոսկեղջիւրի եզերքը կը գտնուի Խասգեղ :

Հոս կը բնակին Թուրքեր, Հայեր, Հրեաներ ու Յոյներ : Խասգեղի Սիւլիճէի մէջ կը գտնուի Պեսական « Գումպարխանէ » զինուորական վարժարանը :

14. Ունինք « Ս. Ստեփանոս » հոյակապ եկեղեցին՝ որուն չրջափակին մէջ է Ս. Ներսէսեան վայրաչէն հինաւուրց վարժարանը, որ առնոյք մեծ փայլ ունէր: Դպրոցին դիմացը կը գտնուի « Գալֆեան » Որբանոցը :

15. **Էյուպ.** — Խասգեղի դիմաց, Ոսկեղջիւրի միւս եզերքը, արուարձան մ'է Էյուպ :

Վերի Էյուպի մէջ է « Ս. Եղիա » եկեղեցին :

Վարի Էյուպի մէջ է « Ս. Աստուածածին » եկեղեցին:

16. **Գալաթա.** — Պոլսոյ հարաւ. արեւմտեան կողմը, Սամաթիոյ պարիսպներէն դուրս, Մարմարայի եզերքն է Գալաթա : Մէջէն կ'անցնի Սիրքէճիէն մեկնող երկաթուղիի գիծը որ կ'երկարի դէպ ի Մարմարիտ-քէօյ :

Գալաթայի կողմն է Ս. Յակոբի Որբանոցը :

Ունի գործարաններ : Տեղին բնակիչները կը կազմեն Թուրք, Հայ, Յոյն ու Հրեայ :

17. Երկաթուղիի գծին վրայ, Եէտի-Գուլէէն դուրս են « Ս. Փրկիչ » եկեղեցին ու Ազգ. Հիւանդանոցը :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 13. Ո՞ւր է Խասգեղ. — Որո՞նք կը բնակին. — 14. Եկեղեցին ու վարժարանը ի՞նչպէս կը կոչուին. — 15. Էյուպի եկեղեցիները որո՞նք են. — 16. Ո՞ւր է Գալաթա. — Հոս ո՞վ կը բնակի եւ ինչե՞ր կան. — 17. Ո՞ւր է Ազգ. Հիւանդանոցը :

---

5. ԴԱՍ. — ՎՈՍՓՈՐԻ ՆԵՂՈՒՑԸ

18. **Վոսփորի Նեղուցը.** — 28 քմ. երկայնութեամբ նեղ ծով մ'է որուն մէկ ծայրը, հիւսիս, Սև ծովուն ու միւս ծայրը, հարաւ, Մարմարա ծովուն միացած է: Վոսփորի նեղուցն Եւրոպա և Ասիա ցամաքներուն մէջտեղը կ'ինայ և Ասիան Եւրոպայէն կը զատէ :

19. **Երկու եզերքը.** — Արեւմտեան եզերքը կը կոչուի Եւրոպական եզերք ու արեւելեանը՝ Ասիական եզերք:

Եւրոպական եղերքը կը գտնուի, Օրթագեղ և անկէ անդին Արնավուտ քէօյ, Պէպէք, Ռումէլի Հիսար եւ ուրիշ գեղեր։ Ասիական եղերքը կան Իւսկիւտար և անկէ անդին Պէյլէրպէյի, Գանտիլլի, Անատօլու Հիսար եւն։ Վոսփորի նեղուցէն ամէն օր նաւեր կ'երթեւեկեն Սեւ ծովէն դէպ ի Մարմարա և Մարմարա ծովէն դէպ ի Սեւ ծով։

20. **Եւրոպական եղերք.** — Գապաթաչէն ու Տօլմա Պաղչէէն անդին, Օրթագեղ չգացած՝ կը գտնուի Պէշիքթաշ ուր կայ Ս. Աստուածածին եկեղեցին և Մաքրուհեան վարժարանը։

Օրթագեղի մէջ ունինք «Խնդրակատար Ս. Աստուածածին» եկեղեցին և վարժարանը։

Գուրու Չէշմէի մէջ է «Ս. Խաչ» եկեղեցին։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 18. Ի՞նչ է Վոսփորը. ո՞ւր է մէկ ծայրը, մի՞ւսը, — Վոսփորի նեղուցն ո՞ւր կ'իյնայ. — 19. Ո՞ր կողմն արեւմտեան եղերք, եւ ո՞րն արեւելեան կը կոչուի. — 20. Ո՞ր գեղերը կը գտնուին Վոսփորի Եւրոպական եղերքը. — Որո՞նք են Եւրոպական եղերքի հայաբնակ գեղերը։

6. ԴԱՍ. — ՎՈՍՓՈՐ (Շար.)

21. **Ռումէլի Հիսարի մէջ է** «Ս. Սանդուխտ» եկեղեցին։
Պոյանը գեղի մէջ է «Ս. Երից Մանկանց» եկեղեցին։
Սքէնիայի մէջ է «Ս. Յովհ. Կարապետ» եկեղեցին։
Եէնի գեղի մէջ է «Ս. Աստուածածին» եկեղեցին։
Պէյլիւ տէրէի մէջ է «Ս. Հռիփսիմէ» եկեղեցին։
Ասիական եղերք. — Եէնի-Քէօյի դիմաց, ծովէն անդին, կը գտնուի՝
Պէյքօզ՝ ուր կայ «Ս. Նիկողայոս» եկեղեցին։

Գանթիլլիի մէջ է «Ս. Երկոտասան Առաքեալք» եկեղեցին։

Գուզկունճուքի մէջ է «Ս. Լուսաւորիչ» եկեղեցին։

22. ՎՈՍՓՈՐԻ ԵԶԵՐՔԸ

Եւրոպական եղերք

Կամուրջէն՝ Թօփհանէ, Գապաթաչ, Պէշիքթաշ, Օրթագեղ, Գուրուչէշմէ, Արնավուտ քէօյ (7 քմ.), Պէպէք (9 քմ.), Ռումէլի Հիսար (10 քմ.), Պոյանը քեօյ, Էմիրկեան (12 քմ.), Սքէնիա (15 քմ.), Եէնի քէօյ (16 քմ.), Թարապիա (17 քմ.), Պէօյիւք տէրէ (19 քմ.), Մէղար պուռնու (21 քմ.), Եէնի մահլէ (23 քմ., Ռումէլի գավագ (24 քմ.)։

Ասիական եղերք

Վոսփորի Սեւ ծովու բերանէն՝ Անատօլու գավագ (31 քմ. կամուրջէն), Պէյդող (18 քմ.), Բաչա պահչէ (17 քմ.) Զուպուգլը (15 քմ.), Գանկրճա (13 քմ.), Անատօլու Հիսար (11 քմ.), Գանտիլլի (10 քմ.), Վանի քէօյ (8 քմ.), Զէնկէլ քէօյ (7 քմ.), Պէյլէր պէյ (6 քմ.), Գուզկունճուգ (5 քմ.)։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 21. Ո՞ւր կը գտնուի Ս. Սանդուխտ եկեղեցին։ — Ս. Երից Մանկանց եկեղեցին, եւն. — 22. Վոսփորի երկու եզերքը ո՞ր գիւղերը կան. — (Շինել քարտէսը եւ տեղերը նշանակել)։

7. ԴԱՍ. — ՊՈԼՍՈՅ ՆՇԱՆԱՒՈՐ ՇԷՆՔԵՐԸ

23. **Ցիստարարանները.** — Ինչպէս գիտնք, հին ու նշանաւոր քաղաք է Պոլիսը, զոր առաջին անգամ հիմնած է Բիւզաս անուն Աթենացին՝ կամ Արգիացին որ Մեգարացիներու ցեղապետ կամ հրամանատար էր։ Ասոր համար է որ Պոլսոյ հին անունը Բիւզանդիոն կ'ըս-

ուլ։ Հոն կը տեսնենք յիշատակարանները, կոթողները, հոյակապ չէնքերը, որոնց վրայ հետզհետէ նոր ու գեղեցիկ չինութիւններ աւելցուցած են Օսմանեան Սուլթանները՝ սկսեալ Ֆաթիհէն մինչեւ մեր աշխարհաշէն ու մեծանուն կայսրը, ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԽԱՆ Բ.

24. **Հին յիշատակարաններն** են Զէմպէրլի Թաշ, Տիքիլի Թաշ (օձակերպ սիւն որ Դելփիսէն բերուած է), Դրզ գուլէսի, (Վոսփորի նեղուցին բերանը)։

Շէնքեր՝ Պոլսոյ քէմեր, Եէնի գուլէի աշտարակաւոր պարիսպները, Զիարձակարանը (Սէթ մէյտան) Յուստինիանոսի պալատը՝ (Զաթլասը գափուի մօտ), Թէքֆուր սէրայ, Թոփգափու սէրայ, Պին պիր տիրէք կոչուած հին Ջրամբարը, Զուքուր չէշմէ, Զէյրէք, Մեծ չուկան, Կալաթայի աշտարակը, եւն. եւն։

25. **Իսկ նոր դարերու մէջ կառուցուած են** Ջրաղանի եւ Տոլմա պահճէի պալատները եւ Հնութեանց Թանգարանը, Պէշիքթաշի մեծ ժամացոյցի աշտարակը եւ Համիտիյէ մզկիթը։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — 23. Ի՞նչ գիտէք Պոլսոյ պատմական շէնքերուն վրայ. — 24. Որո՞նք են հին յիշատակարաններն ու շէնքերը. — 25. Իսկ նորերը՞։

[*Այս հնութիւններուն լուսատիպ պատկերները իրր հետաքրքրական՝ հաւաքել օգտակար է տղոց համար*]։

8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Գ. ԱՄՍՈՒԱՆ

Պոլսոյ բաղերը. — *Հարաւակողմն են Գում-Գափու, Գում-Գափուի Դուրս, Կէտիկ-Փաշա, Լանկա, Եէնի-Գափու հայաբնակ թաղերը։*

Աւուրձանները. — *Պոլսոյ դիմաց կ'իյնան Ոսկեղջիւրի կողմը՝ Կալաթա, Մարմարայի եւ Վոսփորի միացած տեղը՝ Իւսկիւտար, որուն հարաւակողմն է Գասրքէօյ (Քաղկեդոն)։ Գալաթիայէն Բերա փոպուլի կայ։*

Գալաթիոյ վերեւն է Բերա որ ունի 6 գլխաւոր թաղ։

Գասրմ-Փաշան Ոսկեղջիւրի եզերքն է։

Ոսկեղջիւրի եզերքն են Խասգեղ, Էյուպ, Ֆէնէր, Պալաթ եւ այլ թաղեր։

Գաղլը Սամաթիայէն քիչ մը անդին Մարմարայի եզերքն է։ Հոս է Ս. Յակոբի Որբանոցը։

Իսկ Հիւանդանոցն ու Ս. Փրկիչ եկեղեցին՝ Եէնի-Գուլէէն դուրս, երկաթուղիի գիծին վրայ են։

Վոսփորի նեղուցին *երկու եզերքները բազմաթիւ գիւղեր կան, նշանաւոր են իրենց գեղեցիկ չէնքերով, բնական գիրքով, օդով, ջրով։*

Պոլսոյ մէջ նշանաւոր են իրենց հնութիւն՝ Զէմպէրլի Թաշ, Տիքիլի Թաշ, եւայլն։ Նաեւ Աշտարակները, Թոփ-Գաբուի պալատը, Պինպիրտիրէկի հանրածանօթ Ջրամբարը, եւայլն։



ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ

1. Թէ ի՞նչ ըսել է գումարել. —1. Աւասիկ երկու պզտիկ ծրարներ, մէկուն մէջ 4 հատ գրիչ կայ, միւսին մէջ 8 հատ։ Սա ծրարին գրիչները միւսին հետ կը միացընեմ ու կը համրեմ, 12 հատ կ'ըլլայ։ Ինչպէս տեսաք, գործողութիւն մ'ըրի։ Սա ըրածիս ԳՈՒՄԱՐՈՒՄ կ'ըսուի, իսկ 12 թիւը ղոր գտայ ԳՈՒՄԱՐ կը կոչուի։
2. Գումարել՝ կը նշանակէ իրարու վրայ աւելցընել։

1.—1. Ի՞նչ կ'ըսուի այն գործողութիւնը զոր կ'ընեն՝ երկու ծրար գրիչ իրարու միացընելու ատեն, եւ ի՞նչ կ'ըսուի անոր արդիւնքը։ 2. Ի՞նչ ըսել է գումարել։

Վարժութիւններ. **1.** — Գումարեցէք 7 գնտակ և 3 գնտակ. — 8 լուբիա և 5 լուբիա. — 6 հաւկիթ և 8 հաւկիթ. — 7 գիրք և 8 գիրք. — 9 տետրակ և 8 տետրակ։ **2.** — 4 թիւը մեծցուցէք 10 անգամ, 100 անգամ, 1000 անգամ։

2 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

2. Տարբեր տեսակ առարկաները իրարու վրայ չեն գումարուիր. — Մենք գրիչները գրիչներու վրայ գումարեցինք։ Այս կերպով, մի եւ նոյն տեսակ առարկաները կրնանք իրարու վրայ գումարել, ինչպէս՝ մատիտներ մատիտներու հետ, գրչածայրեր գրչածայրերու հետ։ Բայց չենք կրնար 3 գրիչ և 4 խնձոր իրարու վրայ աւելցընել, կամ 6 մատիտ և երկու գիրք իրարու վրայ գումարել, որովհետեւ եւածը ի՞նչ է, գրի՞չ թէ

խնձոր, մատիտ թէ գիրք, — ո՛չ մէկը ո՛չ միւսը։ Ըսել է թէ տարբեր տեսակ առարկաները իրարու վրայ չեն գումարուիր։

2. Ո՞ր առարկաները կրնանք գումարել։ Գրիչները խնձորներուն հետ կարելի՞ է գումարել։ Մատիտները գնտակներո՞ւն հետ։

Վարժութիւններ. **3.** — Իրարու վրայ աւելցուցէք 6 խնձոր և 6 խնձոր. — 3 կաղամար, 5 կաղամար և 7 կաղամար։ — 500 թիւը 10 անգամ պզտիկցուցէք։ **4.** — Գումարեցէք 3 սիսեռ, 5 սիսեռ և 8 սիսեռ։

3 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

3. Ինչպէ՞ս կրնանք թիւ մը ուրիշ թիւի մը վրայ աւելցընել. — Թիւ մը ուրիշ թիւի մը վրայ աւելցընելու համար, կրնանք առաջին թիւին բոլոր միաւորները մէկիկ մէկիկ՝ երկրորդ թիւին վրայ աւելցընել։ Այսպէս 3ը 6ին վրայ աւելցնելու համար, կ'ըսենք. 6՝ 1ալ, կ'ընէ 7, 7՝ 1ալ կ'ընէ 8, 8՝ 1ալ կ'ընէ 9։ Ըսել է թէ 3 միաւորները, այսինքն երեք հատ 1 (1. 1. 1) աւելցուցինք 6ին վրայ, որ եղաւ 9, գումարը։ Բայց եթէ բոլոր թիւերը այս կերպով, մէկիկ մէկիկ, իրարու վրայ գումարենք, շատ երկար կ'ըլլայ։

4. Ի՞նչ պէտք է գիտնալ աղէկ գումարելու համար. — Աղէկ գումարել սորվելու համար, պէտք է բերանացի գիտնալ թէ թուանշան մը ուրիշ թուանշանի մը վրայ աւելցընելով ի՞նչ կ'ունենանք։ Այս բանը կրնանք սորվիլ գումարման աղիւսակով։

3. Թիւ մը ուրիշ թիւի մը վրայ ի՞նչպէս կրնանք աւելցընել։ Այս կերպը գործնական եւ դիւրին է։ **4.** Գումարում աղէկ ընելու համար ի՞նչ պէտք է գիտնալ։

4 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻՒՍԱԿԸ

5. **Գումարման աղիւսակը.** — *Միեւնոյն թուանշանին երկու թիւերը իրարու վրայ գումարել կը սորվինք այս աղիւսակին մէջ.*

1՝	2 ալ	կ'ընէ	3	1՝	3 ալ	կ'ընէ	4
2՝	2 —	—	4	2՝	3 —	—	5
3՝	2 —	—	5	3՝	3 —	—	6
4՝	2 —	—	6	4՝	3 —	—	7
5՝	2 —	—	7	5՝	3 —	—	8
6՝	2 —	—	8	6՝	3 —	—	9
7՝	2 —	—	9	7՝	3 —	—	10
8՝	2 —	—	10	8՝	3 —	—	11
9՝	2 —	—	11	9՝	3 —	—	12

5. Ըսէ՛ք ի՞նչ թիւ կ'ունենամ՝ 2 աւելցընելով նախնական 9ը թիւերուն վրայ: Իսկ 3 աւելցընելո՞վ ինչ թիւեր կ'ունենամ:

5 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻՒՍԱԿԸ (Շար.)

1՝	4 ալ	կ'ընէ	5	1՝	5 ալ	կ'ընէ	6
2՝	4 —	—	6	2՝	5 —	—	7
3՝	4 —	—	7	3՝	5 —	—	8
4՝	4 —	—	8	4՝	5 —	—	9
5՝	4 —	—	9	5՝	5 —	—	10
6՝	4 —	—	10	6՝	5 —	—	11
7՝	4 —	—	11	7՝	5 —	—	12
8՝	4 —	—	12	8՝	5 —	—	13
9՝	4 —	—	13	9՝	5 —	—	14

Դարձեալ՝ նախնական ինը թիւերէն ամէն մէկուն վրայ 4 աւելցընէք, ի՞նչ թիւ կ'ունենամ: Իսկ 5 աւելցընելո՞վ:

Վարժութիւններ. **5.** — *Մէկ արշին չուխան կ'արժէ 20 դրչ. քանի՞ դրչ. կ'արժէ 10 արշին չուխան, քանի՞ կ'արժէ 100 արշինը:* **6.** — *Սա պատուհանը 6 քառակուսի ունի, սա միւսը՝ 8 քառակուսի, երկուքը մէկտեղ քանի քառակուսի ունին:* **7.** — *Սա պղտիկ տղան 8 տարեկան է, սա միւսը 9, երկուքը մէկտեղ ի՞նչ տարիք ունին:*

6 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻՒՍԱԿԸ (Շար.)

1՝	6 ալ	կ'ընէ	7	1՝	7 ալ	կ'ընէ	8
2՝	6 —	—	8	2՝	7 —	—	9
3՝	6 —	—	9	3՝	7 —	—	10
4՝	6 —	—	10	4՝	7 —	—	11
5՝	6 —	—	11	5՝	7 —	—	12
6՝	6 —	—	12	6՝	7 —	—	13
7՝	6 —	—	13	7՝	7 —	—	14
8՝	6 —	—	14	8՝	7 —	—	15
9՝	6 —	—	15	9՝	7 —	—	16

Ի՞նչ գումար կ'ունենամ, եթէ 1էն մինչեւ 9 թիւերէն իւրաքանչիւրին վրայ 6 աւելցընէք: Եօթը աւելցընելո՞վ ինչ թիւեր կը ստանամ:

Վարժութիւններ. **8.** — *Մարդ մը երկու օր ճամբայ քալեց, առաջին օրը 7 ժամ, երկրորդ օրը 9 ժամ. քանի՞ ժամ քալեց երկու օրուան մէջ:* **9.** — *Եթէ այսօր, երկուշաբթի, ամսուն 7ն է, մինչեւ չաբաթ օր ամսուն քանի՞ն կ'ըլլայ:* **10.** — *Որսորդ մը բռնեց 5 կաքաւ եւ 9 արտոյտ, քանի՞ թռչուն որսաց:*

7 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՂԻՒՍԱԿ (Շար.)

1՝	8 ալ	կ'ընէ	9	1՝	9 ալ	կ'ընէ	10
2՝	8 —	—	10	2՝	9 —	—	11
3՝	8 —	—	11	3՝	9 —	—	12
4՝	8 —	—	12	4՝	9 —	—	13
5՝	8 —	—	13	5՝	9 —	—	14
6՝	8 —	—	14	6՝	9 —	—	15
7՝	8 —	—	15	7՝	9 —	—	16
8՝	8 —	—	16	8՝	9 —	—	17
9՝	8 —	—	17	9՝	9 —	—	18

Թիւ 1 էն մինչեւ 9 ին վրայ 8 գումարելով ի՞նչ թիւ կ'ունենամ: Հապա 9 աւելցընելո՞վ ի՞նչ թիւեր կը կազմէ:

8 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

6. Եթէ երկու թիւերու կարգը փոխենք, ասոնց գումարը չի փոխուիր. — *Կը տեսնենք գումարման աղիւսակին մէջ որ 3՝ 4 ալ կ'ընէ 7, կամ 4՝ 3 ալ կ'ընէ 7, 5՝ 3 ալ կ'ընէ 8, կամ 3՝ 5 ալ կ'ընէ 8: Ասիկ կը ցուցընէ թէ երկու թիւեր իրարու վրայ գումարած ատենդ, մէկը առաջ դրեր ես միւսը ետ, նշանակութիւն չունի, գումարը միշտ միեւնոյն է:*

Ուրեմն, երբ շատ մը թիւեր ունենաք գումարելու, ի՛նչ կարգով կ'ուզէք գումարեցէք, կամ ո՛ր թիւէն կ'ուզէք սկսեցէք, միշտ միեւնոյն գումարը կ'ելլէ:

---

6. Գումարուելիք երկու թիւերու կարգը կրնա՞նք փոխել: Օրինակներ տուէք: Շատ թիւեր գումարած ատենդիդ, թիւերը որ եւ է շարքով կրնա՞ք իրարու վրայ աւելցընել:

Վարժութիւններ. **11.** — *Հետեւեալ թիւերը գրով գրեցէք*, 80975, 15080, 1805, 1453900, 103206: **12.** — *Թուանշանով գրեցէք. Երկու միլիոն չորս հարիւր հազար. Ութը հազար չորս. Տասնրհինգ հազար երկու հարիւր ութսուն:* **13.** — *Ո՞րն է այն թիւը որ կը նշանակէ 9 տասնաւոր և 8 միաւոր.* — 6 *հարիւրաւոր և 7 միաւոր.* — 11 *հազարաւոր*, 7 *տասնաւոր և 5 միաւոր.* — 70 *հազարաւոր*, 3 *հարիւրաւոր*, 6 *տասնաւոր*: **14.** — *Հետեւեալ թիւերուն մէջ քանի՞ հատ հազարաւոր, հարիւրաւոր, տասնաւոր և միաւոր կայ*, 867, 198, 20150, 935800, 18799: **15.** — *Թիւ մը կայ որ կը բաղկանայ* 1 *հարիւրաւորէ*, *երկու տասնաւորէ և* 5 *միաւորէ. ո՞րն է այն թիւը:*

9 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

7. Գումարման սահմանը. — *Շատ մը թիւեր իրարու վրայ գումարել՝ կը նշանակէ այն բոլոր թիւերը մէկտեղ հաւաքել մէկ թիւ կազմելու համար, որ կը կոչուի Գումար: Գումարին մէջ այնքան միութիւն կայ, որքան միութիւն որ կայ այն բոլոր թիւերուն մէջ:*

8. Գումարման նշանը. — *Գումարման նշանը սա խաչաձեւն է + որուն առաջեն կ'ըսուի և կը գրուի երկու կամ աւելի թիւերու մէջտեղ, այսպէս 3+4ը կը գրուի և կը կարդացուի երեք՝ առաջեն չորս: Ասոնց գումարն է 7, ուրեմն կը գրուի 3 + 4 = 7 և կը կարդացուի երեք՝ առաջեն չորս՝ հաւասար եօթը, ուրեմն սա = նշանին անունն է հաւասար:*

---

7. Ի՞նչ ըսել է շատ մը թիւեր գումարել: 8. Ո՞րն է գումարման նշանը: Օրինակ մը տուէք:

10 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

9. Իրարու վրայ գումարել երկու թիւեր, որոնցմէ մէկը միայն մէկ թուանշան ունենայ. — *Մենք արդէն գումարման աղիւսակին մէջ սորվեցանք և հիմա գիտենք թէ ի՛նչպէս պէտք է երկու թիւեր իրարու վրայ գումարել: Միեւնոյն կերպով կրնանք մէկ թուանշանով թիւը երկու թուանշանով թիւին վրայ գումարել, օրինակ* 14 + 6 = 20, 58 + 3 = 61, *նոյնպէս* 625 + 5 = 630, 912 + 3 = 915: *Անոնք որ դժուարութիւն կրեն, կրնան մատերու վրայ համրել:*

---

9. Ի՞նչպէս պիտի սորվիս գումարել երկու թիւեր որոնց մէկը միաթուանշան է:

Վարժութիւններ. — **16**էն **31**. Հեռաւեալ գումարումներն ընել, 57 + 9 : 48 + 6 : 67 + 8 : 92 + 5 : 58 + 3 : 63 + 9 : 36 + 5 : 427 + 3 : 532 + 8 : 627 + 9 : 453 + 6 : 267 + 8 : 438 + 9 : 562 + 6 : 417 + 6 : 238 + 7 : — **32**. Ես 6 տարեկան եմ, եղբայրս 2 տարի մեծ է ինձմէ, քանի՞ տարեկան է եղբայրս : — **33**. Տուն մը 2 դուռ և 7 պատուհան ունի, 2 դուռ և 3 պատուհան ալ չենցին, քանի՞ դուռ, քանի՞ պատուհան եղաւ : — **34**. Հաւնոցին մէջ 7 հաւ և 3 բադ կայ, ուրեմն քանի՞ թռչուն կայ հաւնոցը : — **35**. Պարտիզպան մը 8 հատ խնձորի և 3 տանձի տունկ տնկեց, քանի՞ տունկ տնկեց :

11 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

10. Քանի մը թուանշաններ աւելցընել ո՛ր եւ է թիւի վրայ. — Այսինքն եթէ երկու, երեք, չորս թուանշան ունենանք և ուզենք թիւի մը վրայ աւելցընել, օրինակ 2, 5, 7ը ուզենք աւելցընել 12ին վրայ, պէտք է նախ 2ը աւելցընել, յետոյ 5ը, յետոյ 7ը : Այսպէս, 12 + 2 = 14 : 14 + 5 = 19 : 19 + 7 = 26 : Այսինքն 12 առաւել 2 կ'ընէ 14, 14 առաւել 5 կ'ընէ 19 և 19 առաւել 7՝ կ'ընէ 26 :

11. Պէտք է կարճ խօսիլ և այնպէս ըսել, 12՝ 2 ալ 14, 5 ալ 19, 7 ալ 26 :

10. Շատ մը միաթուանշան թիւեր ո՛ր եւ է թիւի վրայ աւելցընելը ի՞նչպէս կ'ըլլայ : **11**. Ի՞նչ կերպ ընելու է:

12 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

12. Շատ մը թուանշաններէ բաղկացած թիւեր իրարու վրայ գումարել (առանց ձեռք առնելու). — 1. Կ'ուզենք իրարու վրայ գումարել 314, 451 և 213 թիւերը: Պէտք է սառնք իրարու տակ գրել այնպէս որ միաւորները

իրարու տակ գան, տասնաւորները իրարու տակ և հարիւրաւորներն ալ իրարու տակ : Սապէս,

314
451
213
———
978

յետոյ գիծ մը գծել անոնց ներքևէն :

2. Այսպէս գրելէ յետոյ, կըսկսինք նախ միաւորները իրարու վրայ գումարել և կ'ըսենք, 4՝ 1 ալ 5, 3 ալ՝ 8 և միաւորներուն տակ կը գրենք **8**, յետոյ կը գումարենք տասնաւորները, 1՝ 5 ալ 6, 1 ալ 7 և կը գրենք տասնաւորներուն տակ **7**: Յետոյ հարիւրաւորները՝ այսպէս, 3՝ 4 ալ 7, 2 ալ՝ 9, և կը գրենք հարիւրաւորներուն տակ **9**: Գումարը կ'ըլլայ 978 :

12. — 1. Գումարուելիք թիւերը ի՞նչպէս շարելու է : — 2. Ե՞տքը ինչ ընելու է :

Վարժութիւններ. — **36**էն **39**. Հեռաւեալ գումարումներն ընել, 348 + 121 + 220 : — 1143 + 402 + 234 : — 203 + 15 + 371 : — 8503 + 1051 + 323 :

13 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

13. Շատ մը թուանշաններ ունեցող թիւեր իրարու վրայ գումարել (ձեռք առնելով). — Նախորդ դասի օրինակին մէջ տեսանք որ մէկ սիւնի վրայ գտնուող թիւերուն գումարը 9էն աւելի չէր : Բայց ամէն ատեն այդպէս չի պատահիր, երբեմն ալ այդ գումարը 9էն աւելի կ'ըլլայ : Օրինակ. Կ'ուզենք իրարու վրայ գումարել, 2947, 1812 և 619 թիւերը :

2947 Նախ այս թիւերը իրարու տակ կը գրենք, այն-
1812 պէս որ ամէն մէկ թուանշանը իր տեղը պահէ :
619 Յետոյ աջ կողմէն սկսելով՝ միաւորներու սիւնը
5378 կը գումարենք, ըսելով, 7՝ 2 ալ 9՝ 9 ալ՝ 18 :

Հիմա չենք կրնար այս 18ը գրել գծին տակ, որովհետեւ 8ը միաւոր է, իսկ 1ը տասնաւոր, ուրեմն 8 միաւորը կը գրենք միաւորներու սիւնին տակ և 1ը ձեռք կ'առնենք ու կ'ըսենք, ձեռք կայ մէկ, 4 ալ՝ 5, 1 ալ՝ 6, 1 ալ՝ 7, այս 7ը տասնաւոր է արդէն և կը գրենք տասնաւորներու սիւնին տակ։ Հիմա ձեռք չկայ, ուստի հարիւրաւորները կը գումարենք, սապէս. 9՝ 8 ալ 17, 6 ալ՝ 23, այս 23ին 3ը հարիւրաւոր է, կը գրենք հարիւրաւորներու սիւնին տակ, իսկ 2ը հազարաւոր է, ձեռք կ'առնենք և կ'ըսենք, ձեռք կայ 2, 2 ալ՝ 4, 1 ալ 5։ Այս վերջին 5ը հազարաւոր է, կը գրենք և գործողութիւնը կը վերջանայ։ Գումարն է ուրեմն 5378։

13. Բացատրեցէ՛ք՝ ինչպէս կը գումարէք ցաս մը թիւեր՝ ինչպէս 2947, 1812 եւ 619։

Վարժութիւններ. — **40.** Քաղաքի մը մէջ երեք դպրոց կայ, առաջինին մէջ 124 աշակերտ, երկրորդին մէջ 132 և երրորդին մէջ 108 աշակերտ կայ, երեքին մէջ քանի՞ աշակերտ կայ։ — **41.** Մարդ մը Դեկտեմբերի մէջ 124 ղրշ. Յունվարի մէջ 87 ղրշ. և Փետրվարի մէջ 52 ղրշ. ծախք ըրաւ, հաշուեցէք թէ երեք ամսուան մէջ քանի՞ ղրշ. ծախք ըրաւ։ — **42.** Մարդ մը իր նըստած տանը տարեկան վարձքը երեք անգամէն վճարեց, առաջին անգամ 95 ղրշ. երկրորդ անգամ 560 ղրշ. երրորդ անգամ 1110 ղրշ. ի՞նչ է տանը ամբողջ վարձքը։

14 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

14. Ձեռք առնել. — Արդէն նախորդ օրինակներու մէջ սորվեցանք թէ ի՞նչ ըսել է «ձեռք առնել», այսինքն երբ վերէն վար միաւորներու կամ տասնաւորներու սիւնը կը գումարենք, եւ գումարը կ'երկու թիւ եղէ, աջ

կողմինը կը գրենք, ձախը ձեռք կ'առնենք։ Ասոր կանոնը շատ պարզ է.

Եթէ սիւնակին գումարը 10էն մինչեւ 19 ըլլայ, ձեռք կայ 1
— — — 20էն — 29 — — — 2
— — — 30էն — 39 — — — 3

և այսպէս շարունակ, միշտ այդ գումարին ձախ կողմի թիւը ձեռք կ'առնենք։

14. Ի՞նչ ընելու է՝ երբ սիւնակի մը թիւերուն գումարը 9էն մեծ է։

Վարժութիւններ. — **43էն 50.** Հետեւեալ գումարումներն ընել, 1328 + 457 + 365 + 7452 + 305։
207 + 4518 + 37 + 480։
2007 + 98 + 234 + 567 + 18։
4539 + 2078 + 472։
2237 + 4750 + 3020 + 548 + 712։
438 + 8727 + 45617 + 709։
279 + 3785 + 57296 + 4783 + 257։
9 + 17 + 435 + 7229 + 80452 + 7980 + 375 + 30 + 8։

51. Երկրագործ մը սերմի համար 314 ղրշ. ի ցորեն, 210 ղրշ. ի գարի և 106 ղրշ. ի կորեկ գնեց, քանի՞ ղրշ. տուաւ։ — **52.** Երկու քոյրեր մէկ չաթթուան մէջ կար կարելով վաստկեցան, մէկը 30 ղրշ. միւսը 18, երկուքը մէկտեղ քանի՞ ղրշ. վաստկեցան։ — **53.** Դպրոցի մը Ա. դասարանին մէջ 26 աշակերտ կայ, Բ.ին մէջ 18, Գ.ին մէջ 32, Դ.ին մէջ 16, քանի՞ աշակերտ կայ դպրոցին մէջ։ — **54.** Լեւոն խաղի մէջ վաստկեցաւ 14 գնտակ, արդէն 15 ալ ունէր, հիմա քանի՞ գնտակ եղաւ։ — **55.** Մարդ մը իրիկունը տուն դարձած ատեն գնեց 8 ղրշ. ի միս, 3 ղրշ. ի բրինձ, 2 ղրշ. ի պտուղ, 14 ղրշ. ի իւղ, քանի՞ ղրշ. ի բան գնեց։ — **56.** Պզտիկ աղջիկ մը իր դրամարժութեան տետրակին 12 երեսը գրած է, դեռ 12 ալ կը մնայ գրելու, տետրակը քանի՞ երես ունի։ — **57.** Դարբին մը Յունվար ամսուան մէջ չահեցաւ 290 ղրշ. Փետրվարի մէջ

465 և Մարտին մէջ 1184 ղրչ. երեք ամսուան մէջ քանի՞ ղրչ. չահեցաւ։ — **58**. Գինեգործ մը երեք կարաս գինի ծախեց, առաջին կարասին մէջ 128 օխա կար, երկրորդին մէջ 194, երրորդին մէջ 215, ընդամենը քանի՞ օխա գինի ծախեց։ — **59**. Երկրագործ մը ունի 3 կով, 25 ոչխար, 8 այծ, 6 եզ և 2 գոմէշ, քանի՞ տուար ունի այս երկրագործը։ — **60**. Պարտիզպան մը ծախեց 5 ղրչ.ի մաղտանոս, 3 ղրչ.ի սալաթա, 6 ղրչ.ի կաղամբ, քանի՞ ղրչ.ի բան ծախեց։ — **61**. Յակոբ 8 բարենիշ չհած է չորեքշաբթի և 7 բարենիշ ուրբաթ, քանի՞ բարենիշ չահեցաւ մէկ շաբթուան մէջ։ — **62**. Տղայ մը իր մօրը համար 60 փարայի թել և 20 փարայի կոճակ գնեց, քանի՞ ղրչ. պիտի վճարէ։

---

15 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

15. Ձեռք առնելով գումարել. — Կ'ուզենք գումարել սա երեք թիւերը 734 + 247 + 856։ Նախ իրարու տակ կը գրենք յեռոյ կանոնին համեմատ կ'ը-
սենք, 4՝ 7 ալ 11, 6 ալ՝ 17, կը գրենք 7, 734
ձեռք կ'առնենք 1, ու կ'ըսենք՝ ձեռք կայ 1, 247
3 ալ 4, 4 ալ 8, 5 ալ 13 կը գրենք, ձեռք 856
կայ 1, 7 ալ 8, 2 ալ 10, 8 ալ 18 կը գրենք 1837
18, որովհետև ալ թիւ չկայ որ 1ը ձեռք ընենք անոր վրայ աւելցնելու համար։

---

15. Ձեռք կայի դրութեամբ գումարեցէք 734, 247 եւ 856 թիւերը։

Վարժութիւններ. — **63** էն **70**. Հետեւեալ գումարումներն ընել, 23 + 8 + 7։ 72 + 6 + 5 + 7։ 17 + 5 + 4 + 3 + 8։ 66 + 2 + 7 + 9։ 327 + 5 + 6։ 247 + 8 + 6 + 2։ 738 + 7 + 5 + 2։ 830 + 7 + 3 + 6 + 4։ — **71**. Գիւղացի կին մը 2 ղրչ. ունէր քովը քաղաք եկած ժամանակ, հոն ծախեց 8 ղրչ.ի հաւկիթ և 18 ղրչ.ի կաղաղ իւղ, հիմա քանի՞ ղրչ. ունեցաւ։ — **72**. Պարտէզի

մը մէջ երկու սալորենի կայ, մէկուն վրայ 52 սալոր գտնուեցաւ, միւսին վրայ 18 սալոր, երկուքին վրայ քանի՞ հատ կայ։ — **73**. Մեր պարտէզին մէջ երեք նեղ ճամբայ կայ, չափերնին, մէկը 28 ոտք եկաւ, միւսը 44 և երրորդը 56, երեքը մէկտեղ քանի՞ ոտք երկայնութիւն ունին։ — **74**. Աշակերտի մը ամսական միջին թիւերն են՝ վարքինը 8, դասերունը 7, աշխատասիրութեանը 7, ի՞նչ է այդ աշակերտի միջին թիւերուն գումարը։ — **75**. Հայրը պատուիրեց որ Սարգիս գումարը։ — **76**. Հայրը պատուիրեց որ Սարգիս չուկան իջնէ բաներ մը գնելու, Սարգիս գնեց 3 ղրչ.ի գետնախնձոր, 8 ղրչ.ի չաքար, 6 ղրչ.ի խաղողէ, 2 ղրչ.ի թէյ, քանի՞ ղրչ.ի բան գնեց Սարգիս։ — **77**. Սա Պօղոսը 12 տարեկան է հիմա, 6 տարի յետոյ, երբ դպրոցը աւարտէ, քանի՞ տարեկան կ'ըլլայ։ — **78*. Մարդ մը ձի մը գնեց 1220 ղրչ.ի և քիչ առաւելն ծախեց, չահեցաւ 380 ղրչ. ըսել թէ քանի՞ ղրչ.ի ծախեց։ — **78*. Ընտանիք մը տարին 3850 ղրչ. ծախք կ'ընէ ուտելիքի, 1260 ղրչ. հագնելիքի, 850 ղրչ. այլ և այլ ծախքի և 1100 ղրչ. ալ կը խնայէ, այս տան ամբողջ եկամուտը քանի՞ ղրչ. է։ — **79**. Մարդ մը 15000 ղրչ. տուաւ տունն մը գնեց, հիմա կ'ուզէ ծախել այնպէս որ 2500 ղրչ. վասակի, ով որ այս տունը գնէ, քանի՞ ղրչ. պէտք է վճարէ։ — **80*. Թթի ծառի մը վրայ կը գտնուի 5 գլխաւոր ճիւղ, 38 հատ երկրորդական ճիւղ և 244 հատ աւելի մանր ճիւղ, իրարու վրայ քանի՞ ճիւղ կը գտնուի թթենիին վրայ։ — **81**. Խնայող մարդ մը մէկ տարուան մէջ երեք անգամ խնայողութեան մտուկին դրամ յանձնեց, առաջին անգամ 280 ղրչ. երկրորդ անգամ 670 ղրչ. և վերջին անգամ 1155 ղրչ. քանի՞ ղրչ. աւելցուց մէկ տարուան մէջ։ — **82*. Երեք գիւղեր իրարու մօտ կը գտնուին, առաջինին մէջ կայ 360 բնակիչ, երկրորդին մէջ 745, չորրորդին մէջ 1290, երեք գիւղերուն մէջ քանի՞ հոգի կայ։ — **83*. Մարդ մը իր տանը սենեակները վարձու տուած է, Ա. սենեակէն տարին 1460 ղրչ. կ'առնէ, Բ. էն 1680, Գ. էն 2510, Դ. էն 2700, ընդամենը քանի՞ ղրչ. կ'առնէ տարին։ — **84*. Գրաւճառ մը երեք օրի-

նակ գիրք տպել տուաւ , Ա. օրինակէն 2000 հատ , Բ. էն 2800 , Գ. էն 3000 , քանի՞ օրինակ տպել տուաւ ընդամէնը :

16 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

16. Փորձ. — *Կրնայ ըլլալ որ թիւերուն գումարը սխալ հանենք , ասոր համար աւելի աղէկ է որ ստուգենք թէ մեր ըրած գումարումը սխա՞լ է թէ ուղիղ : Երբ գումարումը ըրած լմնցած ենք, ու անգամ մ'ալ կը գումարենք ստուգելու համար , ասոր կ'ըսուի փորձ :*

16. Երբ գործողութիւնը լմննայ , ի՞նչ ընելու է : Ի՞նչ է գործողութեան մը փորձը :

Վարժութիւններ. — **85.** 1 էն սկսելով 6 առ 6 հաշիւ ըրէք , մինչև հասնիք այնպիսի թիւի մը որ 60 էն մեծ ըլլայ , օրինակ . 1՝ 6 ալ 7 , 6 ալ՝ 13 , 6 ալ՝ 19 ևէն : — **86.** Նորէն համրեցէք 6 առ 6 մինչև որ հասնիք 60էն աւելի մեծ թիւի մը , համրելով 2 էն այսպէս . 2՝ 6 ալ 8 , 6 ալ՝ 14 , 6 ալ՝ 20 ևէն: — **87.** Համրեցէք 5 առ 5 մինչև 100 , սկսելով 5 էն , օրինակ . 5՝ 5 ալ 10 , 5 ալ՝ 15 , 5 ալ՝ 20 ևէն: — **88.** Համրեցէք 5 առ 5 մինչև 100 , սկսելով 1 էն , օրինակ . 1՝ 5 ալ 6 , 5 ալ 11, 5 ալ՝ 16 ևէն: — **89.** Համրեցէք 7 ով մինչև 70 , սկսելով 1 էն , օրինակ . 1՝ 7 ալ 8 , 7 ալ՝ 15 , 7 ալ՝ 22 ևէն. — **90.** Համրեցէք 7 ով մինչև 100, սկսելով 2էն, օրինակ . 2՝ 7 ալ 9 , 7 ալ՝ 16 ևէն : — **91.** Տուն մը կ'արժէ 4600 ղրշ. սան տէրը նորոգութիւններ ըրաւ , 250 ղրշ. որմնադիրի տուաւ , 390 ղրշ. ատաղձագործի, 85 ղրշ. կպղարարի, հիմա քանի՞ ղրշ. կ'արժէ այս տունը:

17 ԴԱՍ. — ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

17. Գումարումի փորձը. — *Գումարումի փորձը չատ պարզ է : Առաջ մենք վերէն վար գումարեցինք, հիմա*

վարէն վեր կը գումարենք , պէտք է որ միևնոյն գումարը ելլէ , այսպէս .

Գումարում		Օրինակ	Փորձ	
3՝ 2 ալ 5, 1 ալ 6)		243	1՝ 2 ալ 3, 3 ալ 6)	
4՝ 1 ալ 5, 3 ալ 8)	1386	512	3՝ 1 ալ 4, 4 ալ 8)	1386
2՝ 5 ալ 7, 6 ալ 13)		631	6՝ 5 ալ 11, 2 ալ 13)	
		1386		

17. Գումարման փորձը ի՞նչպէս կ'ըլլայ :

Վարժութիւններ. — **92** էն **94.** *Հետևեալ գումարումներն ընել , փորձերով մէկտեղ :* 1728 + 436 + 17 + 228 + 74 + 748: 237 + 45890 + 307 + 4927 + 30578: 4785 + 3789 + 4639 + 74 + 438 + 6720 + 3007: — **95.** 1 էն սկսեալ մինչև 9 , *կարգով իրարու վրայ գումարել , այսպէս .* 1՝ 2 ալ 3 , 3 ալ՝ 6 , 4 ալ 10 ևէն : — **96.** *Յետոյ ասոր փորձը ըրէք , սապէս .* 9՝ 8 ալ 17 , 7 ալ 24 , 6 ալ 30 ևէն: — **97.** 57 էն մինչև 62 եղած թիւերը իրարու տակ դնելով գումարեցէք : — **98.** Անոր փորձն ալ ըրէք : — **99.** 1 էն սկսելով մինչև 19 գումարեցէք , յետոյ անոր փորձը ըրէք 19 էն սկսեալ մինչև 1 :

18 ԴԱՍ . — ՄՏԱՒՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ

18. Մտաւոր գումարում. — *Պէտք է վարժուիլ թիւերը մտքով գումարելու , այսինքն առանց գրելու :*

1. *Օրինակի համար, պէտք է 50 ին և 80ին գումարը գտնել մտքով* (50 + 80) : *Մտքով կը հաշուենք որ 50ը կ'արժէ 5 հատ 10 , իսկ 80ը 8 հատ 10 , ըսել է թէ երկուքը կ'արժեն 5 + 8ը 10 կամ* (5 + 8 = 13) 13 *հատ 10 , այսինքն* 130 : *Ուրեմն մտքով կը համրենք 5 հատ 10 , 8 հատ 10 ալ կ'ընէ 13 հատ 10 , կամ* 130 : *Ուրիշ օրինակ* 300 *և* 700*ը քանի՞ կ'ընեն , մէկին մէջ 3 հատ*

100 կայ, միւսին մէջ 7 հատ 100, ըսել է երկուքին մէջ 10 հատ 100, որ կ'ընէ 1000։

2. Ենթադրենք թէ պէտք է 50 + 84ի գումարը գտնել, 50ի մէջ գիտենք որ 5 հատ 10 կայ, 80ին մէջ 8 հատ 10 և 4 միութիւն, ուրեմն 50 և 80 կ'ընեն 130՝ 4 ալ 134։

---

18. — 1. Մատուռ կերպով գումար ընելը ի՞նչպէս կ'ըլլայ։ Օրինակ 50 եւ 80-թիւերը կրնա՞ս մտով գումարել։ — 2. Իսկ 50 եւ 84 թիւերը։

Վարժութիւններ. — **100.** Հետեւեալ գումարումները մտքով ըրէք, 74 + 12։ 84 + 18։ 48 + 62։ 54 + 25 + 30։ 48 + 42 + 18։ 37 + 48։ 460 + 22 + 12։

---

19 ԴԱՍ. — ՄՏԱՒՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄ (Շար.)

3. Վերջապէս ենթադրենք թէ 58 + 84ի գումարը պիտի գտնենք, նախ կը տեսնենք որ 58ը հաւասար է 50 + 8ի, իսկ 84ը հաւասար է 80 + 4ի, ըսել է թէ պէտք է իրարու վրայ գումարել 50 + 8 + 80 + 4, կամ աւելի դիւրին 50 + 80 որ կ'ընէ 13 և 8 + 4 որ կ'ընէ 12, յետոյ 130 + 12 որ կ'ընէ 142։

---

3. Մտով գումարեցէք 58+84։

Վարժութիւններ. — **101.** Ընտանիք մը կը ծախսէ ամիսը 120 ղրչ. տան վարձքի, 450 ղրչ. ուտելիքի, 78 ղրչ. այլ և այլ, ի՞նչ է այս տան մէկ ամսուան ծախքը։ — **102.** Մարդ մը ձեռք մը զգեստ չինելու համար 150 ղրչ. տուաւ կերպասին, 75 ղրչ. աստառ, կոճակ և մանր մունր ծախք, 120 ղրչ. կարողէք, քանի՞ ղրչ. ի եկաւ զգեստը։ — **103.** Հարուստ քաղաքացի մը, իր կալուածը չափեց և գտաւ որ 280 ակօնիւմ վարուցանքի հող ունի, 72 ակօնիւմ մարգագետին և 350 ակօնիւմ անտառ, քանի՞ ակօնիւմ է այս մարդուն կալուածը։ — **104.** Տղայ մը ծնած է 1888ին, որ թուականին 20 տարեկան կ'ըլլայ։ — **105.** Տղայ մը մէկ տարուան մէջ 5 անգամ խնայեց իր ծնողքէն առած դրամը, ամէն մէկ անգամ 3 ական ղրչ. իրարու քով չարելով գտէք թէ քանի՞ ղրչ. խնայեց։

---

20 ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐԲՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ (1ԷՆ 18)

Գումարում (1էն 13). — Շատ մը թիւեր իրարու վրայ գումարել, կը նշանակէ զանոնք իրարու վրայ աւելցընել մէկ թիւ կազմելու համար։ Այս թիւին կ'ըսուի գումար։ Գումարը կը պարունակէ այնքան միութիւն, որքան կը պարունակէին այն բոլոր թիւերը որ իրարու վրայ գումարեցինք։

Ձեռք առնել (14էն 15). — Երբ մէկ սիւնակի թիւերուն գումարը 9էն աւելի կուգայ, մէկ թիւը կը գրենք և միւս թիւը ձեռք առնելով կ'աւելցընենք յաջորդ սիւնակին վրայ։ Այսպէս միշտ ձախ կողմի թիւը ձեռք կ'առնենք։

Փորձ (16էն 18). — Փորձ ընել կը նշանակէ գործողութիւնը անգամ մ'ալ կատարել, որ համոզուինք թէ ուղի՞ղ է այն թէ սխալ։

Գումարման փորձն ընելու համար պէտք է վարէն վեր գումարել (այսինքն հակառակ կողմէն)։

Վարժութիւններ. — **106.** 1էն մինչև 94 համրեցէք 8 առ 8։ — **107.** Գումարեցէք, 64,876+5,347+896 + 57,849։ — **108.** Գումարել, 758,347 + 698,524 + 59,835 + 764,089։

109. Երեք տակառը մէկտեղ քանի՞ օխա գինի կ'առնեն, եթէ առաջինը առնէ 280, երկրորդը 295 և երրորդը 314 օխա։ — **110.** Երկաթագործ մը 580 ղրչ.

խանութի վարձք կուտայ, 1850 ղրշ. աշկերտներու վարձք և 840 ղրշ. ածուխի և տարին 5700 ղրշ. ալ կը վատակի, ուրեմն բոլորը քանի՞ ղրշ. կ'ընդունի ամբողջ տարին։

111. Քաղաք մը իր շրջակաները ունի 5 գիւղ, քաղաքին մէջ կայ 35,800 բնակիչ, Ա. գիւղին մէջ 2560, Բ. ին մէջ 1210, Գ. ին մէջ 870, Դ. ին մէջ 975 և Ե. ին մէջ 312 բնակիչ, ընդամէնը քանի՞ բնակիչ ունի քաղաքը իր շրջականերովը։

112. Վաճառական մը մնանկացաւ, առնելիքի տէրերը հաշուեցին ու տեսան որ 5 հոգիի պարտք ունի, Ա. ին 12,500 ղրշ. Բ. ին 24,690 ղրշ. Գ. ին 37,900 ղրշ. Դ. ին 40,680 ղրշ. և Ե. ին 975 ղրշ. ընդամէնը ինչ է այս վաճառականին պարտքը։

113. Միւնոյն ճամբուն վրայ 4 քաղաքներ կը գտնուին, Ա.ը Բ. էն հեռու է 5860 մէթր, Բ.ը Գ. էն 12,750 մէթր և Դ.ը Գ. էն 22,800 մէթր, ինչ է Ա. քաղաքի հեռաւորութիւնը Դ. քաղաքէն։

114. Եւրոպայի բնակիչներու թիւն է 302,972,700, Ասիոյ 798,220,000, Աֆրիկէինը 203,301,000, Ամերիկայինը 84,374,672, Ովկիանիայինը 4,438,000, հիմա գտէք ինչ է ամբողջ երկրի բնակիչներուն թիւը։

115. Մեծ քաղաքի մը մէջ 38,740 տուն կայ, եթէ ենթադրենք որ ամէն մէկ տանը մէջ 8 հոգի կը գտնուի, ընդամէնը քանի՞ հոգի կայ այն քաղաքին մէջ։ (8 անգամ իրարու տակ գրելով, գումարեցէք)։

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. ԴԱՍ. — ՀԱՍՏԱՏՈՒՆ, ՀԵՂՈՒԿ ԵՒ ԿԱԶԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Հաստատուն մարմիններ. — Աւասիկ փայտի կլոր մը, դրամ մը, խիճ մը, կաւի մը (Պատկ. 8)։ Այս մարմիններէն ամէն մէկը ձև մը ունի. փայտի կտորը երկարաձև կլոր է. դրամը կլորաձեւ տափակ. խիճը կանոնաւոր ձև մը չունի. կաւիճը կանոնաւոր ձև մը ունի։ Այս մարմիններու ձեւը փոխելու համար պէտք է զանոնք կտրտել։ Ասոնք հաստատուն (կամ պինդ, կարծր) մարմիններ են։



Պատկ. 8 — 1 փայտի կտոր մը, 2 դրամ, 3 խիճ, 4 կաւիճ։

2. Հեղուկ մարմիններ. — Աւասիկ գաւաթ մը ջուր, աւասիկ չիչ մը ձէթ կամ բաժակ մը գինի (Պատկ. 9)։ Ջուրը որ կը գտնուի գաւաթին մէջ, գաւաթին ձեւը ունի. եթէ այս ջուրը սա կոնքին մէջ լեցնենք, կոնքին ձեւը կ'առնէ։ Այսպէս գինիին և ձէթին համար ալ։ Ասոնք հեղուկ մարմիններ են։

Պատկ. 9 — Հեղուկ մարմիններ.

3. Կազային մարմիններ. — Օդը չենք տեսներ, բայց երբ հով կայ, կը տեսնենք որ ծառերուն տերեւները կը շարժին, երբ նեղբը տաք՝ գուրբը ցուրտ է, ձեռքերնիս դնենք դրան մը կամ պատուհանի ճեղքին վրայ, օդի հոսանք մը կը զգանք։ Օդը ձեւ չունի և կը տարածուի ամէն տեղ, ու կը շրջապատէ ամէն մարմին, ամէն ծակ ու ծուկ կը մտնէ։ Օդը կազային մարմին է։

1. Պինդ մարմիններ ըսէք. — **2.** Հեղուկ մարմիններ ըսէք. — **3.** Կազային մարմիններ ըսէք։

2. ԴԱՍ. — ԿԱՊԱՐԱԼԱՐԸ

4. Մարմինները որչափ աւելի բարձր տեղէ վար իյնան, այնքան աւելի արագ կ'իյնան. — Առնենք երկու ղրուշնոց մը. դիտէք որ, եթէ ձեռքէ թողունք սա երկուքնոցը, վար կ'իյնայ: Առնենք կտոր մը թուղթ եւ երկու ձեռքով բռնենք, յետոյ սա երկուքնոցը քիչ մը բարձրէն (Պատկ. 10) թողունք: Երբ կ'իյնայ թղթին վրայ, պզտիկ ձայն մը կը հանէ ու հոն կը մնայ: Նորէն երկուքնոցը առնենք և աւելի բարձրէն (Պատկ. 11) վար թողունք. թղթին վրայ ինկած առեն ուժգին ձայն մը կը հանէ և զայն ծակելով մէջ տեղէն կ'անցնի:



Պատկ. 10



Պատկ. 11

Ա Այսպէս ուրեմն, մարմինները որչափ բարձրեն իյնան, այնքան աւելի արագ վար կ'իյնան:

5. Կապարաւոր ջուանը. — Հիմա սա թելին ծայրը (Պատկ. 12) կապենք կտոր մը կապար կամ պարզապէս սա պզտի քարը: Ա. Բ. թելը ա'յնպիսի ուղղութիւն մը ունի, զոր Բ. կապարը կամ քարի կտորը պիտի ունենար, վերէն վար ինկած ժամանակ: Երբ ջուանի մը ծայրէն կտոր մը կապար կախենք, սոր կ'ըսուի կապարաղար:

Կապարաղարին ուղղութիւնը կը կոչուի ուղղանիգ ու կ'ըսուի. «Այս ջուանը ուղղանիգ է»:

Որմնադիրները կը գործածեն կապարաղար, պատերուն երկայնքէն կը կախեն զայն, դիտելու համար թէ պատը ուղղանի՞գ է:

Բ

Պ.12

4. Ի՞նչ կ'ըլլայ երբ մարմիններ բարձր տեղէ իյնան, — **5.** Ի՞նչ է կապարաղարը. — Ի՞նչ է ուղղանիգը:

3. ԴԱՍ. — ԿՇԻՌԸ.

6. Մարմինները կշիռ ունին. — Առնենք կտոր մը փայտ ու կտոր մը երկաթ, որ գրեթէ միևնոյն մեծութիւնը ունենան: Եթէ այս երկուքը մեր երկու ձեռքերուն մէջ առնենք, յայտնի կը զգանք որ երկաթը աւելի կը կշռէ քան փայտը, այսինքն մէկ ձեռքը աւելի ուժով կը դիմադրէ որ երկաթի կտորը վար չիյնայ, քան միւս ձեռքը փայտին համար: Ասոր համար կ'ըսենք թէ երկաթը աւելի ծանր կը կշռէ քան փայտը:

7. Կշիռքով ի՞նչպէս կը կշռեն. — Իրաւ է որ մենք ձեռքով կրնանք հասկընալ որ երկաթի կտորը աւելի ծանր է քան փայտի կտորը, բայց չենք կրնար ըսել թէ քանի՞ անգամ մէկը միւսէն ծանր է:

Մարմիններու ծանրութիւնը չափելու համար գործիք մը կայ որ կը կոչուի կշիռք (Պատկ. 13): Կշիռքը ձողմ'է, (Պատկ. 2, 2') որ հաստատուած է յենարանի մը վրայ (3.) ձողին ծայրէն ալ կախուած են երկու նժարներ (Ն, Ն'), որոնց մէջ պէտք է դնել այն առարկան զոր պիտի կշռենք:



Պատկ. 13

Հիմա, երկաթի կտորը դնենք մէկ նժարին մէջ, ասոր մեծութեամբ փայտի կտոր մ'ալ միւս նժարին մէջ, հաւասար չի դար: Փայտի կտոր մ'ալ դնենք, հատ մ'ալ, հատ մ'ալ . . . մինչև ինը հատ: Ըսել է թէ ինը կտոր փայտ պէտք է, հաւասար մեծութեամբ

6. Ի՞նչպէս կրնանք հասկնալ թէ այսինչ մարմինը ուրիշ մարմինէ մը աւելի ծանր է. **7.** — Ի՞նչ է կշիռը. — Կշիռով ի՞նչպէս կը կշռեն. — Երկաթի կտոր մը իր մեծութեամբ փայտի կտորէ մը քանի՞ անգամ աւելի կը կշռէ:

երկաթին ծանրութիւնը ունենալու համար։ Երբ երկու կողմը հաւասար դան, պաքը մէջտեղի 0 ին վրայ կուգայ։ Ուրեմն կսոր մը երկաթը, հաւասար կսոր մը փայտէն լինը անդամ աւելի կը կշռէ։

---

4. ԴԱՍ. — ՋՈՒՐԻՆ ՄԱԿԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ

8. Ջուրին մակաւասարութիւնը. — Ամէնքդ ալ դիտէք սա խոշոր կազի թիթեղները, որոնց վարի կողմէն շատ անդամ ծորակ մը կը բանան և կը դործածեն տուներու մէջ։ Եթէ ուզենք շատ կարեւոր բան մը կը սորվինք այս թիթեղին վրայ։ Վարի կողմէն ծակ մը բանանք և ուղիղ անկիւնի ձեւով բարակ խողովակ մը անցընենք այդ ծակին մէջ. յետոյ ջուր լեցընենք թիթեղին մէջ մինչև կէսը և կաւիճով նշանակենք ջուրին բարձրութիւնը. միւս կողմէն խողովակին մէջ դիտելով՝ պիտի տեսնենք որ հոն ալ ջուրը միևնոյն բարձրութեանը հասած է. այնտեղ ալ կաւիճով նշան դնենք։



Պատկ. 14

Եթէ թիթեղին մէջ նորէն ջուր լեցընենք և ջուրին բարձրացած տեղը նշանակենք, կը տեսնենք որ խողովակին մէջ ալ ջուրը միևնոյն բարձրութեանը հասած է։

Սա կը նշանակէ թէ ջուրը միշտ միևնոյն մակաւասարութեան վրայ կը մնայ, երբ լեցուի ամանի մը մէջ և անկէ անցնի ուրիշ ամաններու կամ խողովակներու մէջ։ Ջուրի մակաւասարութիւն ըսելով կը հասկցուի թէ անոր երեսը միևնոյն բարձրութեան վրայ կը դտնուի, երբ մէկ ամանէն ջուրը հոսի միւս ամանին մէջ։

---

8. Կազի թիթեղին մէջ լեցուած ջուրը թիթեղին կցուած խողովակին մինչեւ ո՞ր տեղը կը բարձրանայ։ — Ի՞նչ ըսել է մակաւասարութիւն։

5. ԴԱՍ. — ՋՈՒՐԻՆ ՄԷՋ ԸՆԿՂՄՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

9. Ջուրը իր մէջ ընկղմած մարմինները կը ճնշէ. — 1. Լեցընենք տաշտ մը ջուր և ձեռքերնիս կամաց մը անոր մէջը ընկղմենք (Պատկ. 15). յայտնի կը տեսնենք որ ձեռքերնիս վար իջած ժամանակ դիմադրութիւն մը կը կրէ. այո՛, ջուրն է որ դէմ կը դնէ, և ձեռքերնիս կարծես կը թեթեւնայ ջուրին մէջ։ Իրաւ ալ այնպէս է. եթէ դուք ծովու կամ գետի ջրին մէջ նետուած էք, հարկաւ դիտած էք որ ձեր մարմինը կը թեթեւնայ և, եթէ քիչ մը լողալ գիտէք, ձեռքի ու ոտքի պզտիկ կանոնաւոր շարժումներ կը բաւեն ձեզ ջրին երեսը բռնելու։ Ասոր պատճառը ջրին դիմադրութիւնն է. և երբ մարմին մը շատ ծանր չէ, ջուրը անոր դէմ դնելով՝ չի թողուր որ յատակը իջնէ. այսպէս է որ նաւերը ջուրին երեսը կը մնան։


Պատկ. 15

2. Ջրին այս դիմադրութիւնը աւելի աղէկ կը զգաք եթէ դատարկ ու բարակ տուփ մը ուզէք իջեցընել տաշտին մէջ. կը տեսնէք որ տուփը ասդին անդին կը փախչի, ձեր մատերուն տակէն, որովհետև ջուրը դէմ կը դնէ և վարէն վեր ճնշելով՝ չի թողուր որ տուփը վար իջնէ, և տուփը ջրին յատակը իջեցընելու համար, պէտք է շատ ուժով վրան ճնշել։

3. Եթէ այս տուփին մէջ քանի մը կտոր քար դնէք, ան կամաց կամաց ջրին մէջ կ'իջնէ մինչև կէսը և կը լողայ անոր երեսը, բայց եթէ քարերը շատ ըլլան,

տուփը ջրին յատակը կ'երթայ, ճիշդ ինչպէս որ նաւ մը քիչ ապրանք ունեցած ատեն, ջրին երեսը կը մնայ և կը նաւէ. իսկ երբ ապրանքը խիստ շատ բեռցուի, կը ծանրանայ և ջրին յատակը կ'ընկղմի։

9. — 1. Ջուրը կրնա՞յ նիւթել՝ իր մէջ ընկղմուած մարմիններուն վրայ։ — 2. Տուփ մը կամ պարապ դոյլ մը դիւրութեամբ կրնա՞նք մտցընել ջրին մէջ։ — Ինչո՞ւ դիմադրութիւն կը զգանք. — 3. Դոյլին տակը քար դնելով ի՞նչ կ'ըլլայ։ — Ի՞նչ կը պատահի երբ շատ քար դրուի։

6. ԴԱՍ. — ՕԴԱՊԱՐԻԿ



Պատկ. 16. — Օդապարիկ

10. Օդապարիկ. — 1. Ասէք տաշտ մը ջուր և ձեր ձեռքով փայտի կտոր մը ի՛ջեցուցէք անոր յատակը։ Ձեռքերնիդ քաշելնո՛ւդ պէս փայտի կտորը կը ցատքէ ջրին երեսը կ'ելլէ։ Փայտի կտորը ջրէն թեթեւ է և անոր երեսը կը բարձրանայ։ Միևնոյն բանն է օդին համար. օդէն թեթև մարմին մը չի կրնար հողին վրայ նստիլ, վեր պիտի բարձրանայ օդին մէջ։

Այսպէս է Օդապարիկը, որուն մէջ շուսաւորութեան կազ կը լեցընեն. որովհետև այս կազը օդէն թեթեւ է, օդապարիկն ալ դեռնի վրայ չի կրնար մնալ, վեր կը բարձրանայ։

2. Օդապարիկը կերպասէ շինուած է և հաւկթի ձեւ ունի. կերպասը ամէն կողմէ զօրաւոր շուանններով շարջապատուած է. այս բոլոր շուաններուն ծայրերը կը միանան մէկ տեղ մը, այդ տեղէն կախուած է նաւակ մը, որուն մէջ կրնան քանի մը հոգի նստիլ (Պատկ. 16)։

Օդանաւորդը իր հետը, նաւակին մէջ, կը տանի շատ մը պարկեր՝ աւազով լեցուն։ Երբ ուզէ շուտ շուտ վեր բարձրանալ, այդ պարկերու աւազէն (Ա.) մաս մը կը թափէ որ օդապարիկը թեթեւնայ. երբ օդապարիկը սկսի վար իջնել ինքնիրեն, նորէն մաս մը աւազ կը թափէ որ թեթեւնայ և վար չիջնէ։

Իսկ երբ օդանաւորդը ուզէ շուտ շուտ վար իջնել, շուանը (Զ.) կը քաշէ. այն ատեն օդապարիկին վերի կողմէն կափարիչ մը կը բացուի և քիչ մը կազ դուրս կ'ելլէ։ Այն ատեն օդապարիկը քիչ թեթեւ կ'ըլլայ եւ կը սկսի շուտ շուտ վար իջնել։

10. — 1. Ի՞նչ կը պատահի եթէ փայտի կտոր մը մեծէ տաշտ մը ջուրի մէջ եւ շուտ մը թողուք. — Ի՞նչ է օդապարիկը. — 2. Ի՞նչպէս կը շինուի օդապարիկը. — Օդապարիկը շուտ շուտ վեր բարձրացընելը ի՞նչ կերպով կ'ըլլայ. — Ի՞նչպէս վար իջեցընելու է։

7. ԴԱՍ. — ԾԱՆՐԱԶԱՓ

11. Օդին ճնշումը. — Օդը երկրի վրայ գտնուած բոլոր մարմիններուն վրայ կը ճընշէ։ Օդին ճնշումը սապէս կրնայ ցուցուիլ։ Զրով լեփ լեցուն դաւաթ մը առէք և բերանին վրայ թուղթ մը փակցընելով՝ դարձուցէք հակառակ կողմը (պատկ. 17)։ Պլ-

Պատկ. 17. Օդին ճնշումը ցուցընող փորձ։

ամ տեսնէք որ ջուրը չի թափիր։ Պատճառը սա է որ օդը դուրսէն կը ճնշէ թղթին վրայ և չի թողուր որ անի բաժնուի գաւաթէն։

12. Ծանրաչափը. — Վերի օրինակով տեսանք որ օդը կը ճնշէ. ուրեմն պէտք է գործիք մ'ալ գըտնուի որ այս ճնշումը չափէ։ Աւասիկ այս գործիքն է ծանրաչափը, այսինքն օդին ծանրութիւնը կամ ճնշումը չափող։ Ինչպէս կը տեսնէք պատկերին մէջ (պատկ. 18), կլորիկ տուփ մը կայ որուն բոլորտիքը ժամացոյցի նման աստիճաններ նշանակուած են, այդ աստիճաններու բոլորտիքն ալ քանի մը բառեր, փոփոխական, աղէկ օդ, անձրեւ, մրրիկ, չոր օդ։ Սլաք մ'ալ աստիճաններուն վրայ կը դառնայ։



Պատկ. 18

Գործիքը այնպէս մը չինուած է որ, օդը երբ ամպէ կամ երբ բացուի, երբ անձրեւ գայ կամ երկար ժամանակ արեւաբաւ ըլլայ, սլաքն ալ անոր համեմատ աջ կամ ձախ կողմը կը շարժի։ Որովհետեւ օդը միեւնոյն կերպով չի ճնշեր ամէն ժամանակ. երբեմն ծանր է՝ ինչպէս ամպոտ օրեր, աւելի ծանր՝ փոքրիկ եղած օրեր, աւելի թեթեւ՝ երբ փոփոխական է, և չատ աւելի թեթեւ՝ երբ երկինքը պարզ է։

11. Օդին ճնշումը ի՞նչպէս կը բացատրուի. — **12.** Օդին ճնշումը չափող գործիքը ո՞րն է. — Մեծաղէ ծանրաչափը ի՞նչպէս կը շինուի. — Ինչի՞ կը ծառայէ։

---

8. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐՐՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ (1—12)

Հաստատուն, հեղուկ եւ կազային մարմիններ. (1-3)։ — Հաստատուն մարմինները իրենց համար յատուկ ձեւ մը ունին. այս ձեւը միշտ այն ատեն կը փոխուի երբ կոտրտենք զանոնք. օրինակ, կոտոր մը փայտ, դրամ

մը, քար մը։ Հեղուկ մարմինները ի՛նչ ամանի մէջ լեցնենք՝ անոր ձեւը կ'առնեն. Օր. ջուր, ձէթ։ Կազային մարմինները ոչ միայն ձեւ մը չունին, այլ կը տարածուին ամէն կողմ. ինչպէս օդը։

Կապարալարը (4-5). — Մարմինները որչափ բարձրէն իյնան, այնքան աւելի արագ վար կ'իջնեն։ Մարմինները ուղիղ գիծով վար կ'իյնան։ Այս ուղիղ գիծը կամ ուղղաձիգը կը ցուցուի կապարալարով, այսինքն չուան մը որուն ծայրը կտոր մը կապար կայ։

Կշիռք (6-7). — Մարմիններուն ծանրութիւնը կշռելու համար կը գործածուի կշիռքը, որ յենարանի մը վրայ հաստատուած ձող մ'է։ Այս ձողին երկու ծայրերէն կախուած են նժարներ, որոնց մէջ կը դրուի այն բանը որ պէտք է կշռուի։

Ջուրին մակաւասարութիւնը. — Ջուրին ճնշումը (8-9). — Եթէ մեծ թէնէքէի մը վարի կողմէն խողովակ մը կցենք, թէնէքէին մէջ լեցուած ջուրը ո՛ւր որ բարձրանայ, խողովակին մէջ ալ նոյնչափ կը բարձրանայ. այսինքն միեւնոյն մակաւասարութեան վրայ կը մնայ։

Ջուրը սաստիկ կը ճնշէ վարէն վեր՝ այն մարմիններուն վրայ որ իր մէջ կ'ընկղմին։ Ասոր համար է որ դատարկ տուփ մը դժուար կ'իջնէ ջուրին յատակը։

Օդապարիկ (10). — Օդապարիկը կերպասէ չինուած հաւկթաձեւ մըն է՝ լեցուած լուսաւորութեան կազով որ օդէն չատ թեթեւ է և այս պատճառաւ օդին մէջ կը բարձրանայ։ Օդապարիկով աւելի չուտ բարձրանալու համար, օդանաւորդը մէջի պարկերու աւազը կը թափէ, կամ աւելի չուտ վար իջնելու համար, կափարիչ մը կը բանայ և մաս մը կազ դուրս կը հանէ։

Օդին ճնշումը. Ծանրաչափ (11-12). — Օդը երկրի վրայ գտնուած բոլոր մարմիններուն վրայ կը ճնշէ։

Ծանրաչափը գործիք մ'է որով օդին ճնշումը կը չափուի։ Օդի ճնշումը եղանակին և երկնքի վիճակին համեմատ կ'աւելնայ կը պակսի. երբ աւելնայ, ծանրաչափին սլաքը դէպ ի աջ կողմը կը դառնայ, երբ պակսի դէպ ի ձախ կողմը կը դառնայ։ Առաջին պարագային մէջ, աղէկ օդի նշան է. երկրորդին մէջ՝ դէշ օդի։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

1. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ

1. Ըսէք եւ գրեցէք թէ սա անունները ի՞նչ կը ցուցընեն, այսինքն ինչի՞ անուններ են՝ *անձի՞*, *խաղաքի՞*, *երկրի՞*, *պետութեան՞*, *լեռի՞*, *ջրի՞*, եւայլն։

1. *Թոմաս*, *յատուկ անուն՝ անձի։* — 2. *Մարիամ*, *յատուկ անուն՝* . . . (*ինչի՞*)։ — 3. *Ֆրանսա*, *յատուկ անուն* . . .։ — 4. *Պոլիս*, *յատուկ անուն՝* . . .։ — 5. *Մոսկուա*, *յատուկ անուն՝* . . .։ — 6. *Անգղիա*, *յատուկ անուն՝* . . .։ — 7. *Գանգէս*, *յատուկ անուն՝* . . .։ — 8. *Պալքան*, *յատուկ անուն՝* . . .։ — 9. *Ռուսաստան*, *յատուկ անուն՝* . . .։ — 10. *Ասիա*, *յատուկ անուն՝* . . .։ — 11. *Ուրմիա*, *յատուկ անուն՝* . . .։ — 12. *Վոլգոր*, *յատուկ անուն՝* . . .։ — 13. *Կրեատէ*, *յատուկ անուն՝* . . .։ — 14. *Մինսա*, *յատուկ անուն՝* . . .։ — 15. *Էջմիածին*, *յատուկ անուն՝* . . .։ — 16. *Իսկուէի*, *յատուկ անուն՝* . . .։

ԻՆՉ Կ'ՈՒՏԵՆ

2. Բերանացի եւ գրաւոր ըսէ՛ք թէ ի՞նչ կ'ուտեն հետեւեալ կենդանիները։

1. *Եզը կ'ուտէ* . . . , . . . *և* . . .։ — 2. *Շունը կ'ուտէ* . . . , . . . *և* . . .։ — 3. *Ուղտը կ'ուտէ* . . .։ — 4. *Փիղը կ'ուտէ* . . . , . . . *և* . . .։ — 5. *Ձին կ'ուտէ* . . . , . . . *և* . . .։ — 6. *Այծը կ'ուտէ* . . . *և* . . .։

— 7. *Օձը կ'ուտէ* . . . *և* . . .։ — 8. *Մուկը կ'ուտէ* . . . , . . . *և* . . .։ — 9. *Զուկը կ'ուտէ* . . . , *և* . . .։ — 10. *Ոչխարը կ'ուտէ* . . . *և* . . .։ — 11. *Թռչունը կ'ուտէ* . . .։ 12. *Գայլը կ'ուտէ* . . . *և* . . .։ — 13. *Աղուէսը կ'ուտէ* . . . *և* . . .։ — 14. *Նապաստակը կ'ուտէ* . . . *և* . . .։ — 15. *Կապիկը կ'ուտէ* . . . *և* . . .։ — 16. *Խոզը կ'ուտէ* . . . *և* . . .։

3. Օրինակին պէս բառեր շինեցէք.

1. *Իշխան*, *իշխել*, *իշխանութիւն*։ — 2. *Քարող*, . . . , . . .։ — 3. *Քնիչ*, . . . , . . .։ — 4. *Շէնք*, . . . , . . .։ — 5. *Տէր*, . . . , . . .։ — 6. *Թագաւոր*, . . . , . . .։ — 7. *Եղբայր*, . . . , . . .։ — 8. *Ընկեր*, . . . , . . .։ — 9. *Ծուռ*, . . . , . . .։ — 10. *Մեծ*, . . . , . . .։ — 11. *Խենթ*, . . . , . . .։ — 12. *Ցած*, . . . , . . .։ — 13. *Տաք*, . . . , . . .։ 14. *Պաղ*, . . . , . . .։ — 15. *Փայլուն*, . . . , . . .։ 16. *Դեղին*, . . . , . . .։

ՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

4. Պատասխանեցէք բերանացի եւ գրաւոր։

1. *Ի՞նչ է բառը*, *ի՞նչ է վանկը*։

2. *Հայերէնի մէջ քանի՞ բաղաձայն գիր կայ և քանի՞ ձայնաւոր*։

3. *Ի՞նչ կ'ըսուի երկու պարզ ձայնաւոր գրի՝ որ մէկ ձայն կը հանեն*։

4. *Ի՞նչ է երկբարբառը*։

5. *Անձ*, *կենդանի և իր նշանակող բառերը ինչ կ'ըսուին Քերականութեան մէջ*։

6. *Իսկ ընել՝ ըլալ ցուցընող բառե՞րը*։

7. *Անձի մը*, *կենդանիի մը*, *առարկայի մը ի՛նչպէս ըլալը ցուցընող բա՞ռը ինչ կ'ըսուի*։

8. *Գտէք* 10 *հատ որպիսութիւն նշանակող բառեր*։

2. ԴԱՍ. — ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

Ա. Սահմանական Ներկայ. — *Երեք լծորդութեան բայերը (եմ, իմ, ամ) Սահմանական ներկային մէջ ամբողջ ձեւով կը վերջաւորին :*

Ա. Լծորդ.	Բ. Լծորդ.	Գ. Լծորդ.
Ես կը գրեմ	*Ես կը խօսիմ*	*Ես կը կարդամ*
Դուն կը գրես	*Դուն կը խօսիս*	*Դուն կը կարդաս*
Ան կը գրէ	*Ան կը խօսի*	*Ան կը կարդայ*
Մենք կը գրենք	*Մենք կը խօսինք*	*Մենք կը կարդանք*
Դուք կը գրէք	*Դուք կը խօսիք*	*Դուք կը կարդաք*
Անոնք կը գրեն	*Անոնք կը խօսին*	*Անոնք կը կարդան*

Ա. լծորդութեան բայերուն Սահմանական ներկան կը վերջաւորի Եզակի մէջ — եմ, ես, է

Յոգնակի մէջ — ենք, էք, են

Բ. լծորդութեան բայերը Սահմանական ներկայ կ'ըլլան սապէս. Եզակի — իմ, իս, ի

Յոգնակի — ինք, իք, ին

Գ. լծորդութեան բայերը Սահմանական եզանակի Ներկայ ժամանակը ցուցընելու համար արմատին ծայրը կը փոխեն սապէս. Եզակի — ամ, աս, այ

Յոգնակի — անք, ամ, ան

5. Սահմանական ներկայ ըրէք սա բառերը.

1. *Հանել, պառկիլ, հագալ*
2. *Գովել, հանիլ, ազալ*
3. *Կանչել, նայիլ, լուալ*

6. Սա բայերուն անորոշները գրեցէք.

Կը կանչեմ, կը պառկինք, կը կարդան, կը հագաս, կը սորվին, կ'երգէ, կը քալես, կը յոգնինք, կը նստի, կը լսէք, կը սորվիմ, կը կարդայ, կը լուանք, կը նայիմ, կը պարպէ, կը դիզեմ, կ'աչխատիս, կ'ազայ, կը սպասենք, կը հանիք, կը յուսան :

7. Բ՝բանացի ըսէ՛ք թէ նոյն բայերը ո՞ր լծորդութեան կը պատկանին՝ Առաջինն, Երկրորդ թէ Երրորդ :

Օր. *Կը կանչեմ՝ Ա. լծորդութեան բայ է :*

8. Նոյն բայերուն սկիզբը դրէք *ես, դուն, ան, մենք, դուք, անոնք* դերանուանները, ըստ յարմարութեան, այսպէս. *Ես կը կանչեմ, մենք կը պառկինք, Հայն։*

1. Երբէ լծորդութեանց Սահմ. ներկան միեւնոյն ձեւով կը վերջաւորի : — Ա. լծորդութեան բայերը ի՞նչպէս կը վերջաւորին : — Երկրո՞րդը: — Երրո՞րդը :

3. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՆԵՐՀԱԿԸ

9. Սա խօսքերուն մէջ դեղագիր բառերուն ներհակը դրէք գիծերուն տեղը :

1. *Մեր տունը մեծ չէ, — է։* 2. *Ձեր կօշիկները ղայն չեն, — են։* 3. *Ձեռքերդ մերմակ չեն — են։* 4. *Լեռները բարձր չեն, — են։* 5. *Գրիչները հատս չեն, — են։* 6. *Անոնց քանակները ծուռ չեն, — են։* 7. *Մեր ագարակին սպասաւորները դանդաղ չեն, — են։* 8. *Հաղուստներս աղտոտ չեն, — են։* 9. *Աս գուլպաները երկայն չեն, — են։* 10. *Ձմեռուան օդերը տաք չեն, — են։* 11. *Ձեր դրացիները չար չեն, — են,* 12. *Անոնց զմեղիները գուղ չեն, — են։*

ԱՐՀԵՍՏՆԵՐ ՈՒ ԱՐՈՒԵՍՏՆԵՐ

10. Ըսէ՛ք, ի՞նչ կ'ընեն.

Դեղագործը, անասնաբոյծը, բժիշկը, ակնաբոյժը, ատամնաբոյժը, քաղաքապետը, թատերապետը, երա-

ժըչտապետը, ձիավաճառը, վայտահարը, գոհարավաճառը, ձիադարմանը, վիրաբոյժը, արձանագործը, քանդակագործը, աշխարհագիրը, պատմագիրը, երաժիշտը, կատակերգակը, դերասանը, աստեղագէտը, լարախաղացը, ձեւնածուն կամ աճպարարը, նկարիչը, լուսանկարիչը, պայտարը, խաղախորդը, ոստայնանկը։

11. Ի՞նչ կ'ըսուի ան.

1. Որ չի տեսներ. 2. Որ չի լսեր. 3. Որ մէկ աչք ունի. 4. Որ մէկ ձեռք ունի. 5. Որ գլուխը մազ չունի. 6. Որ լեզու չունի. 7. Որ բանականութիւնը կորսընցուցած է. 8. Որուն անդամները լուծուած են, (այսինքն չեն կրնար գործել). 9. Որուն ծնողքը մեռած են. 10. Որուն էրիկը մեռած է. 11 Որուն կնոջը դուրս ցցուած է. 12. Որ մէկ ոտք ունի։

12. Կետերուն տեղ դրէք պատշաճ բառերը, օրինակին համեմատ։ Օր. Զին չորս ոտքով կենդանի է։

1. Զին չորս ոտքով . . . է։ — 2. Թռչունը երկու ոտքով . . . է։ — 3. Սպանախը . . . է։ — 4. Ցորենը . . . է։ — 5. Սեղանը . . . է։ 6. Շաքարը . . . է։ — 7. Բաճկոնը . . . է։ — 8. Քանակը . . . է։ — 9. Խնձորը . . . է։ — 10. Շունը . . . է։ — 11. Ագռաւակը . . . է։ — 12. Սղոցը . . . է։ — 13. Աղը . . . է։ — 14. Ոսկին . . . է։ — 15. Տզրուկը . . . է։ — 16. Բզէզը . . . է։ — 17. Անծեղը . . . է։ — 18. Թիւնիկը . . . է։ — 19. Դլփինն ալ . . . է։

ՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

13. Հարցումներուն պատասխանեցէք։

1. Նախադասութիւն մը քանի՞ մասէ կը բաղկանայ։

2. Գործողութիւնը կատարող անձը ի՞նչ կ'ըսուի նախադասութեան մէջ։

3. Ի՞նչ տեսակ բառեր Տէր բայի կրնան ըլլալ։
4. » » » Ստորոգելի » »
5. » » » Սեռի խնդիր » »
6. » » » Բնութեան խնդիր »
7. Ի՞նչ հարցումով կը գտնուի Տէր բային։
8. » » » Սեռի խնդիրը։
9. » » » Բնութեան խնդիրը։
10. Ի՞նչ կը կոչուի այն ուսումը որ ուղիղ խօսիլ ու գրել կը սորվեցնէ։

---

4. ԴԱՍ. — ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

Ջ. Սահմանական Անկատար. — Երեք լծորդութեան բայերուն Սահմանական Անկատարը սապէս կ'ըլլայ.

Ա. Լծորդ.	Բ. Լծորդ.	Գ. Լծորդ.
Ես կը գրեի	կը խօսեի	կը կարդայի
Դուն կը գրեիր	կը խօսեիր	կը կարդայիր
Ան կը գրեր	կը խօսեր	կը կարդար
Մենք կը գրեինք	կը խօսեինք	կը կարդայինք
Դուք կը գրեիք	կը խօսեիք	կը կարդայիք
Անոնք կը գրեին	կը խօսեին	կը կարդային

Ա. և Բ. լծորդութեանց վերջաւորութիւնները միւնոյն ձեւն ունին. էի, էիր, էր (եզակիի մէջ)
էինք, էիք, էին (յոգնակիի մէջ)։

Գ. լծորդութեան բայերուն Սահմանական անկատարը կը վերջաւորի այսպէս. Եզ. այի, այիր, ար
Յոգ. այինք, այիք, ային

Յ. Սահմ. Ներկային և Անկատարին սկիզբը միշտ կը մասնիկ կը դրուի, որ ձայնաւորով սկսող բայերէն առաջ՝ ը գիրը ջնջուելով՝ կ' կ'ըլլայ, իսկ միավանկ բայերէ առաջ կու կը դրուի։

Օրինակ. — ԿՐ մտածեմ, կ'ամչնամ, ԿՈՒ լայ։

14. Սահմանական անկատար ըրէք սա բայերը :

1. *Սիրել* , *Ապրիլ* , *Պռաալ*
2. *Ուզել* , *Նստիլ* , *Մնալ*
3. *Խմել* , *Աչխատիլ* , *Խաղալ*

15. Էջ 56 Հրահանգի բայերը Սահմանական եղանակ Անկատար ժամանակի փոխեցէք , այսպէս . *Կը կանչէի , կը պառկէինք, կը կարդային , և այլն։*

16. Սա խօսքերը Սահմ. Ներկայ են : Աշակերտը Անկատարի բոլ փոխե զանոնք՝ բէրանացի եւ գրաւոր :

1. *Հայրս դիր կը դրէ :* — 2. *Դուն չատ կը խօսիս։* — 3. *Աղքատը կը մուրայ :* — 4. *Հովիւը ոչխար կ'արածէ :* — 5. *Ոչխարները խոտ կ'ուտեն :* — 6. *Ոճրագործը կը պատժուի :* — 7. *Տո՞ւն կ'երթաս թէ այգի :* — 7. *Ես միշտ կը կարդամ :* 9. *Դուք չատ կը խնդաք :* — 10. *Մենք կը պաշտինք :* — 11. *Անոնք մեր մօտ կը բնակին :* 12. *Կը հաճի՞ք ինծի հետ գալ :* — 13. *Ցամոյրը (ճեյլան), արջը և առնը (վայրի ոչխար) կը բնակին Կեդրոնական Ասիա , Թիպէթի լեռնադաշտերուն վրայ :*

---

2. Ա. լծորդութեան Սահմ. Անկատարը ի՞նչպէս կը վերջաւորի : Երկրո՞ղը : Իսկ Երրո՞ղը : 3. *Կը* մասնիկը ո՞ւր կը դրուի : Ե՞րբ *կ'* կը գործածենք : Ո՞ր բայեր *կու* մասնիկ կ'առնեն :

---

5. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

17. Որ արհեստաւորներ կը գործածեն

Մատնոց , մուրճ , եռանկիւն , կապարալար , խարտոց , ուրագ , յեսան , կաղապար , մուրճ, սալ , սայլ , տրմուխ , լուծ , թակ , աղեղ, մատնոց , դանակ , աքծան , մամուլ , ունելի , երկժանի :

Օրինակ. — *Մատնոցը դերձակի գործիք է . և այլն :*

18. Կետերուն տեղ յատուկ անուն դրէք :

. . . բանաստեղծը։ — . . . պատմագիրը։ — . . . մարգարէն : — . . . կայսրը : — . . . թագուհին : — . . . սպասեալը։ — . . . առակախօսը։ — . . . պատկերահանը։ — . . . նաւահանգիստը : — . . . պատերազմը : — . . . նեղուցը : — . . . լեռնագօտին : — . . . բուրգերը : — . . . լիճը : — . . . նաւաբանը : — . . . գինին : — . . . ծոցը : — . . . կղզին : — . . . լեռը։ — . . . ովկիանոսը : — . . . ծովը : — . . . կուսակալը : — . . . Ջաբը : — . . . Շահը : — . . . խչխանը : — . . . մարտիրոսը : — . . . առաքեալը։ — . . . կաթուղիկոսը : — . . . եպիսկոպոսը : — . . . նահապետը : — . . . Փարաւոնը։ — . . . դուքսը : — . . . էմիրը։ — . . . չէյխը : — . . . պատրիարքը : — . . . ազգապետը : — . . . դեսպանը : — . . . հիւպատոսը :

19. Հարցումներուն պատասխանեցէք միայն բայով մը. Օր. *Փոցով կը փչէ , Ունելիով կը քռնէ :*

Ի՞նչ կ'ընէ դարբինը՝ փքոցով , ունելիով , մուրճով , խարտոցով , ծակիչով , մամուլով :

20. Նոյն բային քով դրէք տեր բային եւ նորէն գրեցէք , այսպէս . *Դարբինը փոցով կը փչէ , ունելիով կը քռնէ, մուրճով կը զարնէ , և այլն :*

21. Նոյն խօսքն ընդլայնեցէք՝ առելցընելով սեռի խնդիր մը. Օրինակ, *Դարբինը փքոցով կը փչէ կրակը, և այլն։*

ՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

22. Հարցում երուն պատասխանեցէք .

1. *Ի՞նչ է անունը կամ դոյականը :*
2. *Անունը ե՞րբ յատուկ է և ե՞րբ հասարակ :*
3. *Ի՞նչ կը ցուցընէ եւրոպական անունը . — Իսկ վերացականը :*

4. Ի՞նչ է տեր բային։
5. Եղակի տէր բային ի՞նչ թիւ բայ կ'առնէ։
6. Քանի՞ տեսակ լրացուցիչ կ'ունենայ բայը։
7. Ուրիշ ի՞նչ բառեր լրացուցիչ կ'առնեն։
8. Ի՞նչ է դէմքը և քանի՞ է։
9. Ինչէ՞ն կ'որոշուի անուանին թիւը։
10. Բային ժամանակը քանի՞ է և ի՞նչ կը ցուցնէ։
11. Եղանա՞կը քանի է։
12. Քանի՞ լծորդութիւն կայ։

---

6. ԴԱՍ. — ԱՆՑԵԱԼ, ԿԱՏԱՐԵԱԼ

4. Սահմանական՝ Կատարեալ. — *Երեք լծորդութեան բայերուն Սահմ. եղանակի Անցեալ Կատարեալ ժամանակը սապէս կ'ըլլայ.*

Ա. Լծորդ.	Բ. Լծորդ.	Գ. Լծորդ.
Ես գրեցի	*Ես խօսեցայ*	*Ես կարդացի*
Դուն — եցիր	*Դուն — եցար*	*Դուն — ացիր*
Ան — եց	*Ան — եցաւ*	*Ան — աց*
Մենք — եցինք	*Մենք — եցանք*	*Մենք — ացինք*
Դուք — եցիք	*Դուք — եցաք*	*Դուք — ացիք*
Անոնք — եցին	*Անոնք — եցան*	*Անոնք — ացին*

(Ինչպէս կը տեսնուի, Կատարեալին սկիզբը կը մասնիկ չկայ)։

5. Բայը երկու կերպով ցոյց կուտայ անցած գործողութիւն մը։ *Ինչպէս տեսանք, բայը երկու կերպով կը յայտնէ անցած իրողութիւն մը. մէկը՝ անկատար կերպով որ կը ցուցնէ թէ գործը կատարուած է ուրիշ գործողութեան մը միջոցին։ Միւսը՝ կատարեալ կերպով, որ ցոյց կուտայ թէ գործողութիւնը կատարուած է բոլորովին անցած դացած ժամանակի մը մէջ։*

23. Անցեալ կատարեալ ձեռով խոնարհեցէք.

1. *Թրջել,*	*Յոգնիլ,*	*Հազալ*
2. *Փորել,*	*Պատիլ,*	*Հոգալ*
3. *Բռնել,*	*Նայիլ,*	*Փոփսալ*

24. Էջ 56 Հրահանգի բայերը Կատարեալ Անցեալ ըրէք, այսպէս. *Կանչեցի, պառկեցանք։*

25. Սա խօսքերը յոգնակի ըրէք.

1. *Սպասուհին վառեց ճրագը։* — 2. *Դուն ալեցիր բակը։* — 3. *Թռչունը երգեց ծառին վրայ։* — 4. *Քահանան մեռելը թաղեց։* — 5. *Նաւաստին առագաստ պարզեց։* — 6. *Վարժապետը ճառ մը խօսեցաւ։* — 7. *Տէրտէրը Աւետարան կարդայ։* — 8. *Մատս այրեցաւ բոցէն։* — 9. *Ես ջուրի պէս կարդացի դասս։* — 10. *Մինչև առտու ցուրտէն դողացիր ու հազացիր։* — 11. *Ջաղացպանը ցորեն դնեց, ալաց ու ծախեց։* — 12. *Լոյսը պլպլայ։*

---

4. Երեք լծորդութեան Անցեալ Կատարեալ ժամանակը ի՞նչ գրերով կը վերջաւորի։ Անցեալ Կատարեալը կը մասնիկ կ'առնէ՞։ 5. Քանի՞ կերպ է անցեալը։

---

7. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

26. Սա բառերը յոգնակի ըրէք, այսպէս. *Աղքատին խրճիթը.* — *Աղքատներուն խրճիթները, Լայն։*

Աղքատին խրճիթը, հարուստին ապարանքը, թագաւորին պալատը, լեռին ալբիւրը, կաքաւին բոյնը, գեղացիին տան, դեղին դալրոյը, պարտէզին պատը, այս երկրին բնակիչը, ճարտարապետին յատակագիծը, ածուին բանջարեղէնը, որմնադիրին ծեփիչը, հիւսնին կարկինը, առաղձագործին սղոցը, քարակոփին կռանը,

դարբինին ուռը, հացագործին փուռը, որսորդին հրացանը, կարուսակին ասեղն ու հերիւնը, նաւին կայմը, ջուլհակին կկոցը, ջահրակը, իլը և շրջընկալը (*) :

27. Սա բայերուն գոյականը գտէք.

Գողնալ, այցելել, թղթակցիլ, գրել, ջրել, քաղել, գամել, մորթել, պագնել, համբուրել, ծխել, ծծել, պատնել, նեղել, գիշերել, օթեւանիլ, երեսել, քաղել, խծպել, կարել, տապկել, զբօսնել, պտիլ, կաքաւել, ընակիլ, շնչել, մռնչել, որսալ, եփել, ծեփել :

28. Որոշեցէք թէ հետեւեալ առարկաները բո՞յս են, կենդանի՞ են թէ հանք են :

Թէյ, ոչխար, պղինձ, պղպեղ, յամոյր, սամոյր, աղնագ, բրինձ, արշ, քարիւղ, կորեկ, աուն, հանքածուխ, նարինջ, երկաթ, պղպատ, խոզ, մողէս, սեխ, գարի, աղամանդ, բուստ, յակինթ, մարգարիտ, սուտակ, եղջերու, նոխազ, յովատակ, զամբիկ, մանանեխ, շուշան, արոյր, աղ, մնդուս :

29. Հարցումներուն պատասխանեցէ՛ք ամբողջ նախադասութիւններով, այսպէս. *Երկրագործը սայլով բեռ կը կրէ, եայն :*

1. *Ի՞նչ կ'ընէ երկրագործը՝ սայլով, բրիչով, բահով, տրմուխով, արօրով, խարազանով, մանգաղով, երկժանիով, տափանով, եայն :*

2. *Ի՞նչ կ'ընէ լպուտը՝ թակով, ասեղով, մկրատով, ասեղով, եայն :*

(*) Կկոց (= մէքիմ), ջահրակ (= լըգրըգ), իլ (= իպ), ժոիկ (= մաֆաուա), շրջընկալ = ջահրակին այն կտորը, որուն շուրջը կը դիզուի դերձանը կամ բուրդը :

30. Նոյն խօսքերուն մէջ բայերը, խնդիրներն ու տեր բայիները որոշեցէք, այսպէս. *Երկրագործը սայլով բեռ կը կրէ : Այս խօսքին մէջ բայն է կը կրէ : Ո՞վ. — Երկրագործը՝ տէր բայի կը կրէ բայն : — Երկրագործը ի՞նչ կը կրէ. — Բեռ, սեռի խնդիր՝ կը կրէ բայն: — Ինչո՞վ կը կրէ. — Սայլով՝ բնութեան խնդիր կը կրէ բայն :*

---

8. ԴԱՍ. — ԱՊԱՌՆԻ

Գ. Սահմանական Ապառնի. — *Բայերուն Սահմ. եղանակ Ապառնի ժամանակը հիշդ Ներկայ ժամանակին պէս է, միայն թէ սկիզբի կը մասնիկին տեղ պիտի կը դրուի :*

Ա. Լծորդ.	Բ. Լծորդ.	Գ. Լծորդ.
Ես պիտի դրեմ	*Ես պիտի խօսիմ*	*Ես պիտի կարդամ*
Դուն » դրես	*Դուն » խօսիս*	*Դուն » կարդաս*
Ան » դրէ	*Ան » խօսի*	*Ան » կարդայ*
Մենք » դրենք	*Մենք » խօսինք*	*Մենք » կարդանք*
Դուք » դրէք	*Դուք » խօսիք*	*Դուք » կարդաք*
Անոնք » դրեն	*Անոնք » խօսին*	*Անոնք » կարդան*

31. Սա բայերը Ապառնի ձեւով գրեցէք :

1. *Վազել, Նմանիլ, Գթալ,*
2. *Մեծել, Թրջիլ, Բաղձալ,*
3. *Կանչել, Հալիլ, Ոռնալ :*

32. Սա խօսքերը Սահմ. ներկայ Գ. դէմքով գրեցէք, այսպէս. *Ձին արշաւեց — Ձին կ'արշաւէ :*

Ձին արշաւեց : Նապաստակը վազեց : Էշը ցատքռտեց : Եղը քաշեց : Դառնուկը վազվզեց : Այծը ոստոստեց : Կատուն ցատքեց: Մողէզը սահեցաւ: Օձը սողաց:

Զուկը լողայ։ Որդը զեռայ։ Դրօշը ծածանեցաւ։ Սկիւռը մագլցեցաւ։ Երկիրը թաւալեցաւ։ Արծիւը ճախրեց։ Առիւծը յարձակեցաւ։ Կոյրը դանդաղեց ու խարխափեցաւ։ Մանուկը կայտռեց։ Նեռը սլացաւ։ Աստղը սուրայ։ Արեւը ծագեցաւ։ Եղջերուն վազվզեց։ Անիւը հոլովեցաւ։ Ջուրը հոսեցաւ, վազեց, թափեցաւ։ Սլաքը յառաջեց։ Ճօճանակը ճօճեցաւ։ Նաւը սուրայ։ Կառախումբը թաւալեցաւ։ Անձրեւը տեղայ (*Տե՛ս Լրացուցիչ, էջ* 52)

33. Ըսէ՛ք՝ ո՞ր լծորդութեան կը պատկանին նոյն բայերը։

34. Գրեցէք *կու* մասնիկ առնող 3 բայ։ Գրեցէ՛ք *կ՚* մասնիկ առնող 5 բայ։ Գրեցէք *կը* առնող 10 բայ։

---

6. Ա. լծորդութեան Սահմ. եղանակին Ապառնի ժամանակը ի՞նչ ձեւ կը վերջաւորի։ — Իսկ Երկրո՞րդ լծորդութիւնը։ Հապա Երրո՞րդը։ Ապառնին *կը* մասնիկ կ՚առնէ՞։ Ապառնին ո՞ր ժամանակի պէս կը վերջաւորի։

---

9. ԴԱՍ. — ԱՊԱՌՆԻ ԱՆԿԱՏԱՐ

Ճ. Սահմանական՝ Ապառնի Անկատար. — *Ապառնի Անկատարն ալ Անցեալ Անկատարին ձեւով կը վերջաւորի, կը մասնիկին տեղ պիտի մասնիկ առնելով.*

Ա. լծորդ.	Բ. լծորդ.	Գ. լծորդ.
Պիտի գր էի	*պիտի խօս էի*	*պիտի կարդ այի*
» *գր էիր*	» *խօս էիր*	» *կարդ այիր*
» *գր էր*	» *խօս էր*	» *կարդ ար*
» *գր էինք*	» *խօս էինք*	» *կարդ այինք*
» *գր էիք*	» *խօս էիք*	» *կարդ այիք*
» *գր էին*	» *խօս էին*	» *կարդ ային*

35. Սա բայերը Ապառնի անկատար ձեւով խոնարհեցէք. *Խնդրել, Տրտմիլ, Սուրալ։*

36. Բերանացի եւ գրաւոր պատասխանեցէք եւ գտէք հետեւեալ անուանները.

1. *Կապոյտ ծաղիկ մը։* — 2. *Կարմիր ծաղիկ մը։* — 3. *Դեղին ծաղիկ մը։* — 4. *Մանիշակագոյն ծաղիկ մը։* — 5. *Մեծ գետ մը։* — 6. *Բարձր լեռ մը։* — 7. *Ընդարձակ անապատ մը։* — 8. *Կրծող կենդանի մը։* — 9. *Որոճացող կենդանի մը։* — 10. *Մսակեր կենդանի մը։* 11. *Բաղդրուձայն թռչուն մը։* — 12. *Փայլուն մետաղ մը։* — 13. *Օգտակար հեղուկ մը։* — 14. *Վնասակար միջատ մը։* — 15. *Թրու հեղուկ մը։*

37. Էջ 56, Հրանագ 6 ի բայերը Ապառնի անկատար ըրէք։ Օրինակ. *Պիտի կանչէի, պիտի պառկէիր,* եւն։

---

7. — Երեք լծորդութեանց Անկատար Ապառնին ի՞նչպէս կը վերջաւորի։

---

10. ԴԱՍ. — ԹԻՒ 2, 4, 6, 8, 9 ԴԱՍԵՐՈՒՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Սահման. Ներկայ. — *Բային այն ժամանակը, որ կը ցուցնէ թէ գործը կը կատարուի խօսուած միջոցին, կը կոչուի Սահմանական* (*Եղանակ*) *Ներկայ* (*Ժամանակ*)։

Անկատար. — *Երբ բային նշանակած գործը անցած լմնցած է, բայց ուրիշ գործողութեան մը հետ միջ տեղ կատարուած է, այն ատեն բայը Սահմանական* (*Եղանակ*) *Անկատար* (*Ժամանակ*) *կը կոչուի։*

Անցեալ կատարեալ. — *Երբ բայը կը ցուցնէ գործողութիւն մը որ բոլորովին անցած ժամանակի մէջ տեղի ունեցած է, այդ բայը Անցեալ կատարեալ կ՚ըսուի։*

Անցած գործ մը երկու ձեւով կը բացատրուի. — *Բային նշանակած գործողութիւնը երբ կատարուած լմնցած է, կ՚արտայայտուի երկու կերպով. մէկը Անկատար՝ միւսը Կատարեալ։*

Ապառնի. — *Երբ բային ցուցուցած գործը դեռ չէ կատարուած, կամ հիմա չի կատարուիր՝ այլ սակէ վերջը գալիք ժամանակ մը պիտի կատարուի, այն բայը Ապառնի ժամանակ է։*

Ապառնին ալ երկուք է. Ներկայ Ապառնի, Անկատար Ապառնի։

Ներկայ Ապառնին կը նշանակէ թէ գործողութիւնը հիմա կամ վերջը պիտի կատարուի։ Իսկ Անկատար Ապառնին ուրիշ բայէ մը կախում ունենալով՝ կը յայտնէ թէ գործողութիւնը կատարուած չէ։

---

11. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

38. Սա բայերուն արմատները գտէք։

Օրինակ, *Բալել — բայլ։*

1. *Մշակել, երգել, փորել, չարել, գործել, վառել, հերկել, ներկել, եփել, ծեփել, ծեծել, ծծել։*

2. *Խօսիլ, պտտիլ, դադրիլ, չարժիլ, կանգնիլ, փայլիլ, բռնիլ, խորովիլ, հալիլ, եփիլ, ուռիլ, հոլովիլ, ծլիլ։*

3. *Հոգալ, մուրալ, խաղալ, որսալ, յուսալ, հաղալ, երերալ, ծխալ, մխալ, դողալ, չողալ, կաղալ, պլպլալ, ջանալ։*

39. Հարցումներուն պատասխանելով՝ խօսքեր կազմեցէք, այսպէս. *Դասաւորը դաս կը վարէ։*

1. *Դասաւորը ի՞նչ կ'ընէ։* — 2. *Նաւապե՞տը։* — 3. *Բժի՞շկը։* — 4. *Բրո՞ւտը։* — 5. *Ճգնաւո՞րը։* — 6. *Վաճառակա՞նը։* — 7. *Այգեգո՞րծը։* — 8. *Հի՞ւսնը։* — 9. *Ճամբո՞ղը։* — 10. *Մշա՞կը։* — 11. *Պարտիզպա՞նը։*

40. Սա երեք բայերը գրեցէք *Սահմ. եղանակ Ներկայ, Անկատար*, եւ *Կատարեալ* ձեւերով, այսպէս.

Ես կը անկեմ, դուն կը բռնես, ան կը ծփայ, Մենք կը անկենք, դուք կը բռնիք, անոնք կը ծփան։

41. Գրեցէք Ապառնի ժամանակներն ալ։

---

12. ԴԱՍ. — Ս. Դ. Ն. կամ Ը. ԳԻՐԵՐԸ

Տ. Անուններ որոշող գիրերը — *Երբ տուն կ'ըսեմ, յայտնի չէ թէ ո՞ր տունը կամ որո՞ւ տուն ըսել կ'ուզեմ։ Բայց երբ ըսեմ Տունս, ան ատեն կը հասկցուի թէ իմ տունս ըսել կ'ուզեմ,*

Նոյնպէս երբ տունդ կ'ըսեմ, յայտնի է թէ քու տունդ հասկցընել կ'ուզեմ։

Երբ տունը ըսեմ, կը հասկցուի անոր (այսինչ մարդուն) տունը կամ այս ինչ որոշ և ծանօթ տունը։

Ց. Ս, Դ, Ը (Ն) ՑՈԴԵՐԸ։ — *Այս Ս, Դ, Ը և Ն գիրերը յօդ կը կոչուին և գոյականներուն ծայրը կցուելով ցոյց կուտան թէ գոյականը որոշեալ իմաստով գործածուած է։*

10. *Զայնաւորով վերջացող անուններուն ծայրը և յօդ կը դրուի։ Օրինակ՝ Մեղուը չ'ըսուիր, այլ մեղուն։*

42. Սա անուններուն ծայրն յօդը ջնջեցէք.

Պարտէզին դուռը։ — Քաղաքին փողոցները։ — Ուղտին պոչը։ — Ձաւկիս սէրը։ — Վարժապետիդ հրամանը։ — Ժամացոյցին սլաքը։ — Վարժուհիս խրատը։ — Պարտէզիդ ածուները։ — Կերակուրին աղը։ — Գրիչին ծայրը։ — Աղքատին հագուստը։ — Մանուկին անունը։ — Ցիսուսին առաքեալները։ — Դաւիթին քնարը։

43. Սա անուններեն ո՞րը յօդ ունի եւ ո՞րը չունի՝ զատ զատ գրեցէք։

Թան, չորթան, աւանդ, ուս, բերան, սեղան, գե-

լան, յոյս, լոյս, բոյս, կոյս, հուն, բուն, քուն, շուն, ուուն, մածուն, անուն, աչուն, մարմանդ, հիւանդ, հեանդ, արդանդ, սանդ, պատանդ, սպանդ, աւան, դաւաղան, հայս, Թեղանայս, խիւս, հիւս։

44. Սա բառերուն ծայրը *եղ, իղ, աղ* կցելով՝ բայեր կազմեցեք։

1. *Ծամբորդ, խաղ, խաչ, խոց, պատան, պատ, բիր, հերկ, բժիշկ, դեղ, մորթ, շնորհ, վատակ, ծախ, եռ, խօս, հոգ, աղ, փայլ, ծիծ, ծուծ, ծաղիկ, սող, շող, շարժ, քար, արիւն, կասկած, խոց, կրակ, լակ, ծիլ։*

2. *Գոց, կարճ, նեղ, խոնարհ, լուսաւոր, մօտ, փառաւոր, պակաս, փակ, շռայլ, մեծ, ուժով, ծածուկ, հաստատ, ժանգոտ, նուազ, արձակ, դանդաղ, յանախ։*

---

8. Անուններ որոշող գիրեր որո՞նք են։ — 9. Ի՞նչ կը կոչուին այդ գիրերը։ — 10. Ե՞րբ Ն կը դրուի եւ ե՞րբ Ը։

---

13. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

45. Սա խօսքերուն մէջ գտէ՛ք Տէր բայիները։

1. *Պարոնէզին դուռը զոցեցի։* — 2. *Քաղաքին փողոցները չափեցիր։* — 3. *Ուղտս պոչը քաշեց։* — 4. *Զաւկիս սերը պիտի յիշեմ։* — 5. *Վարժապետիդ հրամանը կատարեցի՞ր։* — 6. *Ժամացոյցին պաքը հանեցինք։* — 7. *Վարժուհիս խրատը պիտի լսէք։* — 8. *Պարէզիդ ածունները կը մաքրէի։* — 9. *Կերակուրին աղը ցանեցին։* — 10. *Դրիչին ծայրը ծռեց։* — 11. *Աղքատին հագուստը կը կարկտէի։* — 12. *Մանուկին անունը Յիսուս կոչեցին։* — 13. *Յիսուսին աւաքեալները կը պատուենք։* — 14. *Դաւիթին քնարը կը հնչեցնեմ։*

46. Նոյն հրահանգը նորէն օրինակեցեք՝ Տէր բայիներն

ալ գրելով, եւ բայերուն տակեն գիծ քաշեցեք, այսպէս.
— *Պարոնէզին դուռը ԵՍ (Տէր բայի) զոցեցի։*

47. Իբրեւ մէկ բայ խոնարհեցեք սա վեց բայերը։

Մատնալ, ուռիլ, վճարել,
Հալիլ, նորոգել, խորդալ։

48. Սա գոյզ անուններուն ծայրը յօդ դրէք։

Հացի կեղեւ։ — Գրքի կողք։ — Քարիւղի հոտ։ — Աղբիւրի ջուր։ — Գետի եզերք։ — Աշուխի փոշի։ — Ծառի ճիւղ։ — Ձեռքի փայտ։ — Ոտքի կոշտ։ — Կանակի ոսկոր։ — Հովիւի շուն։ — Տունի պահապան։ — Ճաշի սեղան։ — Քաղաքի դուռ։ — Ճգնաւորի բնակարան։ — Վարունգի կուտ։ — Ճրագի լոյս։ — Գետի հուն։ — Ծառի բուն։ — Դնդղուցի միս։

49. Նոյն բառերը մէյմէկ խօսքի մէջ գործածեցեք իբրեւ Տէր բայի կամ խնդիր։

Օրինակ. — *Հացին կեղեւը կը սիրեմ։ — Գրքին կողքը պատռեցաւ։*

50. Գրեցեք 10 բառ, *եղ* վերջաւորող, 10 բայ *իղ* վերջաւորող եւ 10 բայ *աղ* վերջաւորող։

51. Սահմանին համեմատ յատուկ անուններն գտէք։

1. *Տիեզերքին արարիչը։* — 2. *Բնական երկիրդ։* — 3. *Զորս Աւետարանը գրողները։* 4. *Մեր նախածնողներուն բնակած երկիրը։* — 5. *Ամերիկան գտնող նաւապետը։* — 6. *Օտմ. Պետութեան հիմնադիրը։* — 7. *Առաջին մարտիրոսը։* — 8. *Թուրքիայի մայրաքաղաքը։* — 9. *Սաղմոսները գրող մարգարէն։* — 10. *Եգիպտոսի մէջէն անցնող գետը։* 11. *Այն գետը զոր Մովսէս իր գաւազանով երկուքի բաժնեց։* — 12. *Այն երկիրը որ Ցրաթ ու Թիգրէ գետերուն մէջտեղ կը գտնուի։*

---

14. ԴԱՍ. — ՎԵՐԱԲԱՂ ԲԱՅԻ

11. Բայ. — 1. Բայը բառ մ'է որ կը նշանակէ բան մը ընել կամ ըլլալ :

Բայը կ'արտայայտէ գործ մը զոր կ'ընենք :

Նաև բայը կը հաստատէ թէ անձ մը կամ իր մը ինչ յատկութիւն ունին :

2. Տէր բայի. — Տէր բային կը ներկայացընէ այն անձը կամ իրը որ գործ մը կ'ընէ կամ այս ինչ յատկութիւնն ունի :

3. Բային երեք դէմքերը. — Առաջին դէմքն է խօսողը:

Ա. դէմքը ես դերանունն է : (*)

Երկրորդ դէմքը այն անձն է որուն կը խօսինք :

Բ. դէմքը դուն դերանունն է : (**)

Երրորդ դէմքն է այն անձը որուն խօսքը կ'ընենք :

Գ. դէմքը ան դերանունն է կամ գոյական մը : (***)

4. Թիւ. — Բայը կրնայ ըլլալ Եզակի կամ Յոգնակի : Բայը երկու Թիւ ունի :

Եզակի. — Ես, դուն, ան դերանունները եզակի բայեր կրնան ունենալ :

Յոգնակի. — Մենք, դուք, անոնք դերանուններն ալ յոգնակի բայերու հետ կը գործածուին :

52. Գոյական Տէր բայիով 5 նախադասութիւն գրեցէք:

53. Կէտերուն տեղ պատշաճ բառերը դրէք.

1. Կաղնին շատ մեծ . . . է, որ կը բուսնի ... ին մէջ:

2. Բարձր լեռներուն վրայ ամառ ձմեռ . . . կը գըտնուի : Այդ ձիւնը ամառ առեն հալելով . . . կ'ըլլայ և . . . էն վար հոսելով . . .կը կազմէ և կ'երթայ թափիլ . . . (ո՞ւր) :

(*) Ես դերանունին քով 5 բայ դրէք :
(**) Դուն դերանունին քով 5 բայ դրէք :
(***) Ան դերանունին քով 5 բայ դրէք :

3. Պաղատու ծառերուն վրայ գարնան կը բացուին գոյնզգոյն . . . , որոնք ամառը . . . կ'ըլլան :

4. Ձին մարդուս օգտակար . . . է :

5. Մայրերը գուրգուրանքով կը խնամեն իրենց . . . :

6. Գիշերը լոյս ունենալու համար . . . , . . . , . . . , . . . , և . . . կը վառենք :

7. Փոթորիկի առեն, . . . կ'որոտան, և . . . կը փայլատակէ : Այդ միջոցին վտանգաւոր է . . . տակ ապաստանիլ : Բարձր շէնքերը . . . էն զերծ մնալու համար . . . կ'ունենան :

54. Գտէք այս հրահանգին մէջի բայերը.

---

15 ԴԱՍ. — ՎԵՐԱԲԱՂ ԲԱՅԻ (Շար.)

12. Ժամանակ. — 1. Ժամանակը կը ցուցընէ թէ գործողութիւն մը ե՞րբ կատարուած է, ե՞րբ կը կատարուի, ե՞րբ պիտի կատարուի :

2. Ժամանակը երեք է. Ներկայ, Անցեալ, Ապառնի :

3. Ներկան կը ցուցընէ թէ գործը կը կատարուի խօսուած պահուն :

4. Անցեալը կը ցուցընէ թէ գործը կատարուած լմընցած է առաջուընէ :

5. Ապառնին կը ցուցընէ թէ գործը դեռ նոր պիտի կատարուի :

13. Եղանակ. — 1. Եղանակը կը յայտնէ թէ ինչ ձեւով, ինչ կերպով կը կատարուի գործը :

2. Եղանակը հինգ է.

3. Սահմանական որ գործողութիւնը կը հաստատէ, կը սահմանէ :

4. Հրամայական որ պատուէր կամ հրաման կը ցուցընէ :

5. Ստորադասական *որ կը ցուցընէ թէ գործ մը ուրիշ գործէ մը վերջը կը պատահի :*

6. Անորոշ *կամ* Անեղեւոյթ *որ կը յայտնէ անորոշ գործողութիւն մը :*

7. Ընդունելութիւն *կամ* Դերբայ *որ անձերուն և իրերուն յատկութիւնը՝ վիճակը կը ցուցընէ :*

14· Արմատ. — *Բային արմատը այն մասն է որ նշանակութիւն մը ունի : Արմատը անփոփոխ կը մնայ բային ամբողջ լծորդութեան մէջ :*

15· Վերջաւորութիւն. — *Բային վերջաւորութիւնը այն մասն է որ դէմքին, թիւին, ժամանակին, եղանակին և լծորդութեան համեմատ կը փոխուի :*

55. Հետեւեալ խօսքերուն մէջ դերանունները ի՞նչ դէմք եւ ի՞նչ թիւ են :

Դուն կը լսես : — Մենք կը նեռենք : — Դուք կը յուսաք : — Անոնք կը թողնեն : — Ես կը հարցընեմ : — Անոնք պիտի զբօսնեն : — Ան կը տնաբնայ : — Դուք կը գանիք : — Դուն կ'ընկղմիս : — Անոնք կը սխալին : — Ես մոլորեցայ : — Ան կը նմանի : — Դուն կը քալես :

56. Գրեցէք երկու նախադասութիւն՝ եզակի բայով : Գրեցէք երեք նախադասութիւն յոգնակի բայով,

57. Երեք խօսք ալ գրեցէք, որոնց մէջ բայը անցեալ ժամանակ ցուցընէ : — Երեք նախադասութիւն ալ Ապառնի ժամանակով գրեցէք :

58. Դոյն նշանակող ածականներ մը դրէք կետերուն տեղ : Օրինակ . *Ցարդը դեղին է :*

Ցարդը . . . է : — Կեռասը . . . է : — Խաղողը . . . է : — Խոտը . . . է : — Շապիկը . . . է : — Ամպը . . . է : — Պղինձը . . . է : — Կիսրոնը . . . է : — Նարինջը . . . է : — Ածուխը . . . է : — Կաթը . . . է : — Շուշանը . . . է : — Մեխակը . . . է : — Արիւնը . . . է :

16. ԴԱՍ . — ՎԵՐԱԲԱՂ ԲԱՅԻ (*Շար.*)

16· Երեք լծորդութիւն. — *Բայերը երեք կերպ կը խոնարհին : Անեղեւոյթին վերջաւորութիւնը կը ցուցընէ թէ ո՞ր լծորդութենէն է բայը :*

Եղ վերջաւորող անեղեւոյթը Ա. լծորդութիւն է :
Իլ վերջաւորող անեղեւոյթը Բ. լծորդութիւն է :
Ալ վերջաւորող անեղեւոյթը Գ. լծորդութիւն է :

17· Ներկայ. — *Երբ բային ցուցուցած գործը խօսուած ատեն կը կատարուի, բայը Սահմ. ներկայ է :*

18· Անկատար. — *Երբ գործողութիւնը կատարուած է անցեալ ժամանակի մէջ՝ ուրիշ գործողութեան մը հետ, այն ատեն բայը Սահմ. անկատար ժամանակ կը ցուցընէ : (Օր. Ես կը կարդայի, երբ դուն կ'աղօթէիր :)*

19· Անցեալ կատարեալ. — *Երբ գործ մը չատոնց կատարուած լմնցած է, բայը Անցեալ կատարեալ ժամանակ կը դրուի :*

20· Ապառնի. — *Երբ բայը կը ցուցընէ գործ մը որ ապագային պիտի կատարուի, այն ատեն Ապառնի ժամանակ է :*

21· Անկատար Ապառնի. — *Երբ բայը կը ցուցընէ գործ մը որ ուրիշ գործողութենէ մը կախում ունեցած է բայց չէ կատարուեր, այն ատեն Անկատար Ապառնի ժամանակ է :*

59. Սա խօսքերն օրինակեցէք՝ որոշելով բայերուն ժամանակը եւ լծորդութիւնը :

Դուն կը խնդաս : Ան կը խօսէր : Անոնք վարձատրուեցան : Մենք անիծեցինք : Ես կը վաճառէի : Դուք կ'ատէիք : Ես մերժեցի : Անոնք պիտի զատուին : Ճրագը վառեց : Դուք պիտի բարձրանաք : Ան պզտիկցաւ :

60. Նոյն բայերուն հականիշները գտնելով՝ խօսքերը

նորեն գրեցէք, այսպէս. *Դուն կուլաս։ Ան կը լռէր, եւն։*

61. Ի՞նչպէս կը վերջաւորին երեք յոգնդութիւններու բայերը՝ *Սահմ. ներկայի* մէջ։

62. Իսկ *Անկատարի* մէջ։ *Կատարեալ անցեալին* վերջաւորութիւնն՞ը որոնք են։ Երեք յոգնդութեան բայերուն *Ապառնիի* վերջաւորութիւններն ալ գրեցէք։

---

17. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

63. Հետեւեալ հարցումներուն ուղղեցէք։ Տեսէ՛ք պատասխաններուն մէջ *փայտ* գոյականը գրուած է այլ եւ այլ ձեւերով (*փայտ, փայտին, փայտեն, փայտով*)։

Հարցումներ	Պատասխաններ
Փայտը ի՞նչ կ'ըլլայ	— *Փայտը կը չորնայ*
Ինչի՞ն ծայրը կտրեցիր	— *Փայտին ծայրը կտրեցի։*
Զեռքդ ինչի՞ն դպաւ	— *Զեռքս փայտին դպաւ։*
Ինչէ՞ն աւելի կարծր է քարը։	— *Փայտեն աւելի կարծր է քարը։*
Ինչո՞վ սեղան կը շինուի	— *Փայտով սեղան կը շինուի։*
Ի՞նչը կը տաշես ուրագով	— *Փայտը կը տաշեմ ուրագով։*

64. Նոյնպէս պատասխանեցէք հետեւեալ հարցումներուն՝ գործածելով *ծառ* հասարակ անունը։

1. *Ի՞նչը կը ծաղկի։* — 2. *Ինչի՞ն պտուղը կը քաղես։* — 3. *Ինչի՞ կը փաթթուինք՝ վրան մագլցելու համար։* — 4. *Ինչէ՞ն վար ինկար։* — 5. *Ինչո՞վ պատած է պարտէզը։* — 6. *Ի՞նչը կը կտրես կայլնով։*

65. Սա հարցումներուն պատասխանեցէք (խօսքերն ամբողջ ըլլան)։

1. *Շունը ի՞նչ կ'ընէ։* — *Եղբայրդ ի՞նչ կը կարդայ։* — *Պահապանը ի՞նչ կ'ընէ։* — *Ո՞վ կը խրատէ իր սանները։*

2. *Ի՞նչ կը տեսնես երկինքը։* — *Հայրիկդ չատ կը սիրե՞ս։* — *Պատկեր գծեցի՞ր։*

3. *Որո՞ւ խրատը մտիկ կ'ընես։* — *Արեւին շողերը ի՞նչ կ'ընեն։* — *Վերարկուիդ ի՞նչը կը կոճկես։*

4. *Ո՞ր կենդանիին կը նմանի գայլը։* *Սա կօշիկը ոտքիդ կը յարմարի՞։* — *Ծառէն ի՞նչ կը քաղենք։* — *Խաչիկը ո՞ւր տեսար։* — *Փայտով ի՞նչ կ'ընենք։* — *Ինչո՞վ գիր կը գրենք։* — *Բարեկամիդ ի՞նչ ղրկեցիր։*

(*Ուշադրութիւն ընէք՝ թէ պատասխաններուն մէջ գոյականները ի՞նչպէս կը վերջաւորին = ին, էն, ով*)։

66. Սահմ. ներկայի վեց դէմքերով գրեցէք։

Արտը հերկել, ցանել, հնձել։

67. Սա խօսքերը Անկատարին վեց դէմքերով գրեցէք.

Դասարանին մէջ աշխատիլ, գրել, կարդալ։

68. Սա խօսքերը գրեցէք Անցեալ կատարեալին վեց դէմքերով.

Պարտէզը ջրել ու խնամել։

69. Սա խօսքերն ալ Ապառնիով գրեցէք.

Լուսինը դիտել ու զմայլիլ։

---

18. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ա. ԵՌԱՄՍԵԱԿԵՆ

Բառ, վանկ, գիր. — — *Բառ կը կոչուի մէկ կամ աւելի հնչիւնը կամ ձայնը որ իմաստ ունի, եւ կը կազմուի վանկերէ։ Իսկ գիրերը նշաններ են որով բառ կը կազմուի։*

Ձայնաւոր *տառերը ութը հատ են. ա, է, է, ը, ի, ո, ւ, օ։*

Պարզ ձայնաւորը մէկ գիր կ'ունենայ, Բաղադրեալ ձայնաւորը մէկէ աւելի գիրերէ կը կազմուի՝ բայց մէկ ձայն կուտայ։ Իսկ երկբարբառը երկու ձայնաւորէ կը բաղկանայ՝ որոնք մէկ անգամէն կ'արտասանուին բայց երկու հնչիւն կուտան։

Բաղաձայն տառերը 30 հատ են։ Սոնք ձայնաւորի հետ կրնան հնչուիլ։

Ե և Է միևնոյն ձայնն ունին բաւին մէջտեղը։ Ո և Օ՝ նոյնպէս։ ՈՒ բաղադրեալ ձայնաւորը Վ կամ ՕՒ կը հնչուի։ Յ դիրն ալ երկք կերպ կը հնչուի։

Անուն, Բայ, Ածական. — Անունը անձ, կենդանի կամ իր կը նշանակէ։

Բայը գործ կամ վիճակ կը ցուցընէ։

Ածականը որպիսութիւն կը ցուցընէ։

Նախադասութիւն. — Նախադասութիւնը կը պարունակէ Տէր բայի, Բայ, Ստորոգեալի։

Տէր բայի. — Բային տէրն է այն անձը, կամ կենդանին, կամ առարկան որուն վրայ կը խօսուի։

Տէր բայիին շրացուցիչ են այն բառերը որ անոր իմաստը կ'ամբողջացընեն։

Բայ. — Բայը կա՛մ գործողութիւն մը կը նշանակէ, կա՛մ Տէր բայիին ինչպէս ըլլալը կը հաստատէ։

Բայը կրնայ ստորոգեալին հետ միացած ըլլալ։

Ստորոգեալի. — Ստորոգեալին տէր բայիին որպիսութիւնը կը ցուցընէ. Ստորոգեալիին շրացուցիչ են անոր իմաստը լրացընող բառերը։

70. Սա խօսքերը գրեցէք բայերուն բոլոր ժամանակներով, թիւերով ու դէմքերով։

Ես ծովուն մէջ կը շողամ։

Ես կաթ կը խմեմ։

Օրինակ. — Սահմ. Եղանակ Ներկայ ժամանակ. — Ես կաթ կը խմեմ, դուն կաթ կը խմես, և այլն։

Անկատար. — Ես կաթ կը խմեի, և այլն։

Կատարեալ. — Ես կաթ խմեցի, և այլն։

---

19. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ա. ԵՌԱՄԵԱԿԻՆ (Շար.)

Անուն. — Հասարակ անունը այն է որ միևնոյն տեսակէ ամէն անհատի կամ առարկայի կը յարմարի։

Յատուկ անունը կը պատշաճի մէկ անձի, մէկ առարկայի կամ միևնոյն տեսակէ եղող խումբ մը անձերու կամ իրերու։

Նիւթական անունը չշօշափելի կամ զգալի էակ կամ իր կը ցուցընէ, իսկ վերացական անունը մտքով ըմբռնուող բան մը կը յայտնէ։

Տէր բայի եւ խնդիր. — Տէր բայիին գործողութիւնը կատարող անձն է։

Տէր բայի կրնան ըլլալ անունն ու դերանունը։

Խնդիր կամ շրացուցիչ է այն բառը որ բային իմաստը կ'ամբողջացընէ։ Սեռի խնդիրը կը գտնուի զո՞վ կամ ի՞նչը հարցումներով։ Բնութեան խնդիրը կը գտնուի բային քով այլ և այլ հարցումներ դնելով. (որո՞ւ ի՞նչ բանի, որմէ՞, ի՞նչ բանէ, և այլն)։

Բային խնդիր կ'ըլլան անունն ու դերանունը։

Դէմք, Թիւ. — Դէմքը երեք է, ան որ կը խօսի (ես), ան՝ որուն կ'ուղղենք խօսքը (դուն), և ան՝ որուն վրայ կը խօսինք (ան)։

Թիւը երկուք է. — եզակի, որ մէկ հատ կը ցուցընէ, և յոգնակի որ շատի իմաստ կուտայ։ Անունները, բայերը եւ դերանունները թիւ կ'ունենան։

Անունը յոգնակի կ'ըլլայ եր կամ ներ մասնիկով։

Ժամանակ, եղանակ, լծորդութիւն. — Ժամանակը երեք է — Անցեալ, Ներկայ, Ապառնի։ Եղանակը հինգ է, Սահմանական, Հրամայական, Ստորադասական, Անեռեւոյթ, Դերբայ կամ Ընդունելութիւն։ Լծորդութիւնը երեք է. Անեռեւոյթը եղ վերջաւորող բայեր, իղ վերջաւորող բայեր և աղ վերջաւորող բայեր։

20. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Ա. ԵՌԱՄՍԵԱԿԻՆ (Վերջ)

Սահմանական Ներկան կը վերջաւորի՝

Ա. յօրդ. — *եմ, ես, է, ենք, էք, են :*
Բ. » — *իմ, իս, ի, ինք, իք, ին :*
Գ. » — *ամ, աս, այ, անք, ք, ան:*

Սահմ. Անկատարը կը վերջաւորի՝

Ա. յօրդ. — *էի, էիր, էր, էինք, էիք, էին :*
Բ. » — (*Նոյն*)
Գ. » — *այի, այիր, ար, այինք, այիք, ային:*

Սահմ. Կատարեալը կը վերջաւորի՝

Ա. յօրդ. — *եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին:*
Բ. » — *եցայ, եցար, եցաւ, եցանք, եցաք, եցան:*
Գ. » — *ացի, ացիր, աց, ացինք, ացիք, ացին:*

Սահմ. Ապառնին *կը վերջաւորի ճիշդ* **Սահմ. Անկատարին** *պէս, միայն կը մասնիկին տեղ պիտի կ'առնէ :*

Սահմ. Ապառնի Անկատարը *կը վերջաւորի* **Սահմ. Անկատարին** *պէս, կը մասնիկին տեղ պիտի առնելով :*

Անունները որոշող գիրեր. Ս. Դ. Ն. (*կամ Ը.*) *յօդերը անունին ծայրը կը դնենք՝ անոր իմաստը որոշելու կամ դէմքերը ցոյց տալու համար :*

Ն յօդը կը դրուի ձայնաւորով վերջացող անուններուն ծայրը, ինչպէս նաև երբ յաջորդ բառը ձայնաւորով կամ Հ դրով սկսի : (Ձեռքով և առաւ : Փոսն ինկաւ : Եղբօրն համար, եւայլն) :

Անուններուն ծայրը. — *Այս յօդերէն զատ, անուններուն ծայրը ուրիշ գիրեր ալ կրնանք աւելցնել, ինչպէս. Ցորեն, ցորենի, ցորենէ, ցորենով, կամ ցորենին, ցորեն են, ցորեն ովը :*

ՎԵՐՋ Գ. ՊՐԱԿԻՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0240166

8203

ՆՈՐ ԴՊՐՈՑ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1⁰. — Դպրոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՑՆ ալ. տասը Պրակներու բաժնուած է, մէն մի ամսուան համար մէկ Պրակ։

Ամէն մէկ Պրակ պիտի ըլլայ առ նուազն 5—6 տպագրական թերթ կամ 80—100 էջ։ Պիտի պարունակէ, նիւթերուն համեմատ, գեղեցիկ պատկերներ՝ մեծ մասը յատկապէս ՆՈՐ ԴՊՐՈՑի համար փորագրուած։

2⁰. — ՆՈՐ ԴՊՐՈՑի 10 Պրակներու բաժանորդագինն է

25 Դրս. Պոլսոյ և Դաւառներու համար.

8 Ֆրանկ կամ **3 Ռուպլի** արտասահմանի համար։

3⁰. — Դաւառները ղրկուած Պրակներուն փոստի ծախքը Գործակալութիւնը կը հոգայ։

4⁰. — Տասն օրինակի բաժանորդ գրուողը 1 օր. նուէր կը ստանայ։

5⁰. — Մէկ Պրակի գինն է 5 (հինգ) ղրշ.

6⁰. — Պրակ առ Պրակ գնողին գեղչ չկայ։

7⁰. — Տասը Պրակներն ամբողջանալուն պէս, պիտի դաղրի բաժանորդագրութիւնը և այն ատեն անոնց գինը պիտի ըլլայ 50 ղրուշ, 12 ֆրանք, 5 ռուպլի, բացի փոստի ծախքէն։

8⁰. — Պրակները պիտի ըլլան տմսական, երեք ամսական միացած, կամ 5 ական Պրակով 2 հատոր։

ՆՈՐ ԴՊՐՈՑի Ա. Պրակը «Բիւրակն»ի 1900 Թիւ 33—39ին մէջ իբր նմոյշ հրատարակուած ըլլալով՝ այլ եւս այս կամ այն Պրակէն նմոյշ չենք ղրկեր ո՛ր և է անձի, մանաւանդ որ միակ Պրակի մը պակսելովը ամբողջ Հաւաքածուն կը խանգարի ի վնաս Բաժանորդի մը։

Տպագրութիւնը, պատկերները, Թուղթը, կազմը, նիւթերու բաշխումը և տառերու ընտրութիւնը կատարուած է մասնաւոր խնամով։

Աշակերտներու դիւրութեան համար, Ուսուցիչները կրնան, փոխանակ 25 ղրշ. բաժանորդագինը մէկ անգամէն գանձելու, շաբաթականի դրութեամբ քիչ քիչ հաւաքել և երբ 25 ղրուշը ամբողջանայ, այն ատեն մեզի հասցընել՝ միշտ ջանալով 10 ական բաժանորդագին մէկէն ղրկել, 11 րդ օրինակ մը նուէր ստանալու համար զոր կը յատկացընեն է՛ն ուշիմ աղբատ ուսանողին։

Հասցէ՝ ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

Խորասանձեան խան, Սիրիանի, Կ. Պոլիս